

ԳԼՈՐԱԿ ԳԳՆԱԺԱՄԻ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ֆեոդոր Շելով-Կովեդյան

ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՍԱՆԸ

Կապիտալիզմի եվոլյուցիան (սկսած 1850-ական թթ.) միշտ ուղեկցվել է ճգնաժամերի հերթագայությամբ, որոնցից սկզբում Մեծ Բրիտանիան, հետո՝ Միացյալ Նահանգներն ամեն անգամ դուրս էին գալիս՝ ակտիվորեն օգտագործելով արտաքին աղբյուրները: Իրենց դիրքի եւ հուսալի համբավի շնորհիվ նրանք կարողանում էին մոբիլիզացնել իրադարձությունների այլ մասնակիցների ռեսուրսները եւ առավելագույն օգուտ քաղել դրանցից:

Ռեցեսիան հաղթահարելու կամ թույլ չտալու օպտիմալ մոդելների որոնումը մերթ ընդ մերթ ընդհատվում էր պատերազմներով, որոնց օգնությամբ փորձ էր արվում մեկընդմիշտ վերջ տալ ճգնաժամային երեւույթներին: Միջպատերազմյան ժամանակաշրջաններում ճգնաժամը կառավարելու փորձերը մեղմում էին առավել ակնհայտ մակերեսային հակասությունները՝ չշոշափելով դրանց հիմնային պատճառները:

Հարցերն ըստ էության լուծելուց խուսափելով՝ կապիտալիզմը յուրաքանչյուր տեկտոնական շարժի ընթացքում եւ դրանից հետո ընդլայնում էր իր սպառողական շուկան: Շուկայի՝ ամեն ինչ հօգուտ իրեն գործադրելու ինքնըստինքյան, բնատուր կարողությունն էլ հենց ստեղծում էր մի ինչ-որ հետեւողականորեն իրականացվող «գաղտնի» պլանի գոյության «հնարավորության» խաբուսիկ տպավորություն:

Ներկա գլոբալ ճգնաժամի շատ հայտանիշներ վկայում են այն մասին, որ կապիտալիզմի մեխանիկական տարածումը հասել է իր բնական սահմանագծին, իսկ դա պահանջում է, ի վերջո, սկզբունքայնորեն մոդեռնացնել այն: Ցավոք, ծավալվող իրադարձությունների հենց համարժեք դասակարգումը չի բավականացնում: Տնտեսագետները ճակատագրականորեն ուշանում են մեզ վրա թափված հիմնախնդիրների ճանաչման հարցում. երբ արդեն պարզ դարձավ, որ ճգնաժամը տնտեսական է, համառորեն շարունակում էին այն ֆինանսական անվանել: Երբ Գերմանիայում, Ղուկաստանում, Իսլանդիայում, Իսպանիայում, Իտալիայում եւ Ֆրանսիայում դրան անվերապահ սոցիալական չափում էին վերագրում, այն դժվարությամբ տնտեսական ճանաչեցին: Եվ միայն 2009թ. գարնան կեսին ոմանք սկսեցին խոսել սոցիալ-հումանիտար սպառնալիքի մասին:

Բայց այս սահմանումը եւս արդեն հնացել է: Սակայն շատերն այսպես թե այնպես ընդունում են, որ խոսքն ընդհանուր առմամբ խորքային մշակութային (քաղաքակրթական) ճգնաժամի մասին է:

Ընդհանուր կարծիքի համաձայն, ներկա ճգնաժամն աչքի է ընկնում համակարգային բնույթով, բայց լիարժեք, այսինքն՝ ինքնաբավ համակարգ է միայն մշակույթը, իսկ տնտեսությունը, զուտ գիտական կառուցվածքների շրջանակներից դուրս, ընդամենը դրա ենթահամակարգն է: Իհարկե, նեղ հետազոտության շրջանակում ցանկացած ամբողջություն կարող է համակարգ կոչվել, բայց նման մոտեցումը զուտ ակադեմիական արժեք ունի:

Ավելին, երբ պրակտիկները խոսում են տիրող տնտեսական աշխարհայացքի ճգնաժամի, ֆորմացիոն եւ տեկտոնական տեղաշարժի մասին, նրանք օգտագործում են իմաստային այն շարքը, որն ընդունված է ոչ թե տնտեսագիտությունում, այլ մշակույթում, որին էլ նրանցից ոմանք ուղղակիորեն հղում են կատարում: Մշակույթն են վկայակոչում նաեւ ի հայտ եկած բարոյական ռիսկերի, վստահության ճգնաժամի, շուկայում էթիկայի նորմերը խստացնելու անհրաժեշտության դատողությունների ընթացքում: Չէ՞ որ ակնհայտ է, որ վստահությունը, որի վրա են կառուցվում փոխհարաբերություններն արդեն ամենապարզագույն հասարակություններում, «տարիքով» մեծ է տնտեսությունից, իսկ էթիկան ոչ նրա ածանցյալն է, ոչ էլ նպատակը: Այս բոլոր հասկացությունները փոխառված են մշակութային աշխարհից (համակարգից):

Քանի որ խոսքը մշակութային ճգնաժամի մասին է, ապա հարկավոր է հասկանալ, թե ինչ տեսակի մշակույթն է այն կրում իր վրա: Անցյալում մեկ անգամ չէ, որ մշակութային ճգնաժամեր են եղել, որոնք անպայման պատկանել են մի ինչ-որ որոշակի մշակութային տեսակի: Ներկա ճգնաժամը բացառությունն է: Ակնհայտ են արդի մշակույթի՝ միմյանց հետ կապված ճգնաժամային երկու մեծ երեւոյթներ:

Դրանցից մեկը ներառում է պոստմոդեռնիզմի՝ որպես մշակութային տեսակի, տարբեր կողմերը:

Նախ՝ բավական վաղուց պոստմոդեռնը մշակութային օբյեկտների շրջանառությունից դուրս է հանել հիմնական ռեֆերենտին (իսկական արվեստի փոխարինում զանգվածային մշակույթով), ինչից էլ, մասնավորապես, սկսվեց Արեւմուտքի քաղաքակրթական ջլատումը: Այնուհետեւ պոստմոդեռնը նույնն արեց քաղաքականության հետ. XX եւ XXI դդ. սկսեցին տարածվել ոչ միայն բռնատիրական վարչակարգերը, այլ նաեւ պատմության ավարտի նորածեւ արեւմտյան հայեցակարգերը, անտեսվում էր հանրային կարծիքը հետխորհրդային երկրներում՝ Ռուսաս-

տանից եւ Եվրամիության երիտասարդ երկրներից մինչեւ Վրաստան եւ Ուկրաինա: Ընդ որում, հարկավոր է պատշաճը մատուցել տնտեսական սուբյեկտներին. դրանք բոլորից երկար դիմակայեցին պոստմոդեռնի վարակին: Բայց ի վերջո տնտեսությունը վարակվեց դրանով, եւ այն վերաճեց տնտեսությունը քայքայող ձգանի: Ակնհայտ դարձավ, որ պոստմոդեռնիզմը՝ որպես աշխարհայացք եւ ռազմավարություն, խիստ վտանգավոր է:

Երկրորդ՝ չկայացած դուրս եկավ «միջոցների, այլ ոչ թե նպատակների» իդեոլոգեմը, ինչով վերջերս այնպես հպարտանում էին արեւմտաեվրոպացի ինտելեկտուալները: Ավելի վաղ էլ կարելի էր գլխի ընկնել, որ այդ փիլիսոփայությունը կործանարար է, քանի որ հաստատում է կյանքին գերեզմանոցային մոտեցումը. չէ՞ որ միայն նրանք այլեւս ոչ մի նպատակ չունեն, ովքեր հանգչում են գերեզմանատանը, եւ նպատակներն են, որ բնության մեջ նյութի շրջանառության միջոց են ծառայում: Եվ միայն հիմա է, որ աստիճանաբար վերադառնում է ընկալումն այն բանի, որ առանց անանց արժեքներով ղեկավարվելու, առանց գաղափարական եւ նյութական գործիքները դրանց ենթարկեցնելու՝ մարդկությունը չի ապրի:

Երրորդ՝ անարդյունավետ դուրս եկավ արագության քաղաքակրթությունը: Ֆոնդային շուկաների փլուզումից հետո սկսեցին ամաչել այն որպես տեղեկատվական եւ հետտեղեկատվական տնտեսության գլխավոր նվաճումներից մեկն առաջ քաշելուց: Եվ այնուամենայնիվ, ակնհայտորեն անբավարար ուշադրություն է դարձվում արագությանը չափից ավելի տարվելու բացասական հետեւանքներին:

Իրարանցումն առավել վտանգավոր է սոցիալական առումով, քանի որ սպանում է մարդկանց միջեւ նորմալ շփումը, զրկում նրանց հոգեկան կոմֆորտից, որն անհրաժեշտ է հաջող զարգացմանն ու արժեքներին ուղղված նպատակադրմանը: Արագացումից ելնելով է նաեւ, որ հանուն արտադրանքի նոր մոդելների սպառման, առաջարկի խթանման, ազատական տնտեսությունը հանգեց այն նույն արդյունքին, ինչ եւ դիրեկտիվ տնտեսությունը, ասել է թե՛ ապրանքների որակի անկման:

Տարօրինակ է, բայց փաստ. քանի որ առաջարկվող ապրանքներն ավելի ու ավելի արագ են բարոյապես հմանում, անիմաստ է դառնում արտադրել այնպիսի իրեր, որոնց հուսալիությունը հաշվարկված է երկարատեւ ժամկետի համար: Որակի անկումն աստիճանաբար տարածվեց նաեւ գաղափարների եւ որոշումների արտադրության վրա: Ավելի մեծ թվով գաղափարներ ու որոշումներ են առաջ քաշվում՝ առանց զոնե միջնաժամկետ հետեւանքները հաշվի առնելու:

Նորարարությունների տեմպերի խթանման ճանապարհին մեզ եւս մեկ

ստորջրյա խութ է դարանակալում: Արդեն այժմ զանգվածային սպառողի տրամադրության տակ տեխնիկական նորությունների հայտնվելու ժամկետը, որը տարիներ ու տասնամյակներ էր զբաղեցնում, կրճատվեց մինչև մի քանի ամսի: Մոտ ապագայում այն կարող է հասցվել շաբաթների: Իսկ երբ բանն արդեն հասնի օրերին (դրան է մղում շահույթը մշտապես օպտիմալացնելու ձգտումը), ինովացիոն գործունեությունը, որպես այդպիսին, կիմաստագրվի. նորությունը բարոյապես ավելի արագ կհնանան, քան կհասցնեն լրիվ օգտագործվել:

ԳՆՈՒՄԸ ԵՎ ԵՎԼԱԿԱՆ ԾՆՈՒՂԱՅԻՆ ԵՎԼԱԿԱՄԵՐԻ ՖՈՆԻՆ

Ցավոք, գլոբալ ճգնաժամից դուրս գալը դեռ բավական հեռու է: Միեւնույն ժամանակ, ճգնաժամի հետ կապված իրադարձությունները ծավալվում են դրա ընթացքը ծանրացնող ճյուղային ճգնաժամերի մի ամբողջ շարքի ֆոնին: Դրանց մեծ մասը չունի զուտ տնտեսական ծագում, ինչը մեկ անգամ եւս հավաստում է, որ այն, ինչ տեղի է ունենում, համաձայնության բնույթ ունի:

Ճյուղային ճգնաժամերից **առաջինը** տնտեսագիտության ճգնաժամն է: Այնպիսի տարբեր տեսաբաններ եւ պրակտիկներ, ինչպիսիք են Ռոբերտ Չելիկը, Ջոզեֆ Սթիգլիցը, Նուրիել Ռուբինին, Մարթին Գիլմանը եւ Ուորեն Բաֆեթը, չեն համարձակվում գոնե մոտավորապես ասել, թե երբ կավարտվեն ընթացիկ ցնցումները: Բեն Բերնանկեն շարունակում է պահանջել ամերիկյան բանկերին աջակցություն՝ «ինչ գնով էլ լինի»: Բարաք Օբաման հայտարարում է ռեցեսիայից դուրս գալու սկզբի մասին, իսկ Ալան Գրիսփենը նախագուշացնում է, որ հիփոթեքային շուկայի անկումը եւս 5%-ով (շատ հավանական է) մինչեւ վերջ կխորտակի ամերիկյան տնտեսությունը:

Նման տարածայնությունը բացատրվում է նրանով, որ գիտնականներին չի հաջողվում որոշակի բան ասել ճգնաժամի բնույթի մասին: Առկա բոլոր պատասխաններն առայժմ հանգեցվում են դրա ժխտական սահմանումներին. դա շրջափուլային ճգնաժամ չէ, վերարտադրության սովորական ճգնաժամ չէ, որի դեպքում տոկոսադրույթի բարձրացումը հանգեցնում է դրամական առաջարկի սեղմման, պահանջարկի կրճատման, գների իջեցման եւ ի հետեւանք՝ տոկոսադրույթի նոր իջեցման: Լավատեսություն չեն ավելացնում նաեւ այն պնդումները, թե գիտնականների մեջ համաձայնություն չկա նույնիսկ հին ճգնաժամերի ծագման հարցերում: Այս առնչությամբ երկյուղներ են առաջ գալիս, թե արդյոք բավականաչափ հիմնավոր են համապատասխան հայեցակարգերը:

Երկարաժամկետ տնտեսական ցիկլերի տեսությունն, ըստ երեւույթին, հնացել է: Իրական ցիկլերի տեսությունը գործնական արժեք չունի, գործնական ցիկլերի արդի մոդելները չեն երաշխավորում դրանցում ներկայացված հաշվարկների եւ արդյունքների իրատեսությունը, ինչը դրանք վերածում է զուտ մտքի խաղի:

Ճյուղային ճգնաժամերից **Երկրորդ** հոգեբանական ճգնաժամն է: Ֆինանսական հատվածի եկամտաբերությամբ առաջ եկած խանդավառությունը փոխարինվեց խոր հոռետեսությամբ: Այն բանից հետո, երբ հոդս ցնդեց հերթական պատրանքը, շատերը չգիտես ինչու սկսեցին թաղել կապիտալիզմը որպես այդպիսին, նզովել անկուշտ բանկիրներին եւ այլն:

Իրադարձությունների վրա խիստ ուժեղ ազդեցություն գործող **Երրորդ** գործոնը ազատական տնտեսության ճգնաժամն է: Արեւի տակ տեղ ունենալու համար մրցակցելու անհրաժեշտությունից զրկված՝ այն արագ կորցրեց ինքնավերահսկողությունը: Չարցականի տակ հայտնվեց լիբերալիզմի բազային՝ սեփական ակտիվության պտուղների համար անձնական պատասխանատվության գաղափարը:

Ավաղ, համաշխարհային առաջատարների՝ այժմ այնքան պահանջված գաղափարների ոլորտում է դարանակալել ճյուղային **չորրորդ**՝ փիլիսոփայության ճգնաժամը: Լավագույն դեպքում կապիտալիզմի ամբողջ ռեֆորմը հանգեցվում է դրա անգլոսաքսոնյան մոդելի ծիսական չընդունմանը, վատագույն դեպքում՝ համաշխարհային առաջատարներն իրենք են գուրգուրում սոցիալիզմը՝ մոլորակը մղելով նոր աղետի:

Յինգերորդ՝ գործողությունների ճգնաժամն ուղղակիորեն բխում է նախորդներից: Քանի որ ոչ ոք չունի գլոբալ համադետը հասկանալու պարադիգմը, ապա միջոցներն էլ այնպիսին են, որ կկարողանային օգնել նախորդ, այլ ոչ թե ներկա ցնցումների պարագայում: Այնպիսի քայլեր, ինչպիսիք են շուկայական հարաբերությունների կանոնների պահպանման հանդեպ պետական վերահսկողության ուժեղացումը, համաշխարհային եւ/կամ տարածաշրջանային պահուստային արժուքային ու ֆինանսական կենտրոնների թվի ավելացումը, քվոտաների եւ ձայների վերաբաշխումը Արժույթի միջազգայի հիմնադրամում (ԱՄՅ) եւ այլն, ինքնըստինքյան հնարավոր են եւ անհրաժեշտ: Սակայն այս բոլոր քայլերը ուղղակի կապ չունեն ընթացիկ ճգնաժամային հանգամանքների հետ: Ուստի կասկածելի է, թե արդյոք բավարար են ավելի վաղ իրենց արդյունավետությունն ապացուցած կարգավորման մեխանիզմներն ու նորերի մշակումը՝ նախկին տրամաբանությամբ: Այսինքն՝ ամեն ինչ կարծես թե ճիշտ է արվում, բայց մեկ այլ հիվանդության բուժման համար:

Այնինչ, մարդկությունը բախվում է ամենեւին էլ ոչ սովորական մարտահրավերների: Դրանցից առաջինն այն է, թե արդյոք կապիտալիզմն ինտենսիվ զարգացման ընդունակություն կցուցաբերի: Տարօրինակ է հնչում, քանի որ բոլորը սովոր էին այս երկու երեւոյթների գրեթե նույնացմանը: Իրականում նման կապը կապիտալիստական պարադիգմի շրջանակներում արդարացի է միայն տեխնիկական առաջընթացի առումով: Իսկ որպես կապիտալիզմ հայտնի տնտեսական կացութաձեւն ինքը այդ նույն ժամանակ բացառապես էքստենսիվ էր զարգանում: Այն նոր շուկաներ էր յուրացնում այն նույն մեթոդներով, որոնք փորձարկվել էին հների վրա, եւ ներկա պահին հասել է իր մեխանիկական տարածման աշխարհագրական սահմաններին: Մնում են, իհարկե, Ասիայի եւ Աֆրիկայի աղքատագույն երկրները եւ Հնդկաստանի ու Չինաստանի բազմամիլիարդ հասարակությունների հնարավորությունները: Բայց մի կողմից՝ դրանց յուրացումը պահանջում է հսկայական ներդրումներ, որոնք, բացի Արեւմուտքի համար ոչ անվտանգ Չինաստանից եւ արաբներից, ոչ ոքի չեն ոգեւորում: Մյուս կողմից՝ դա կլինի այն նույն էքստենսիվ ճանապարհի շարունակությունը:

Երկրորդ նույն տրամաբանությամբ հետեւեցին նաեւ այսպես կոչված «նոր ֆինանսական տեխնոլոգիաները»: Պարբերաբար առաջ եկող ֆյուչերսների եւ դերիվատիվների (մինչ այդ արժեթղթերի գոյություն չունեցող տեսակներ) նման նորույթները գործիքներ են, որոնց շրջանառության եղանակը («տեխնոլոգիան»), սակայն, մնում էր հինը, ինչպես դա նկարագրված է Թեոդոր Դրայզերի հանրահայտ «Ֆինանսիստը» վեպում:

Եթե կապիտալիզմի որակական աճի հույսերն անհիմն են, ապա դրա նախադրյալը պետք է դառնա ընդհանուր ընկալումն այն բանի, որ աշխարհին այլեւս չի կարելի մայել որպես սեփական գործունեության ճղճիմ հումք կամ որպես թատերական բեմ, որտեղ ներկայացվում է վիրտուալ գործող անձանց շահերի խաղը: Այն իսկապես դարձել է մեր ընդհանուր եւ շատ հավաք տունը, եւ մենք մեզ այնտեղ պետք է հավուր պատշաճի պահենք:

Այստեղից բխում է երկրորդ մարտահրավերը. կկարողանա՞ արդյոք տնտեսագիտությունը դուրս գալ սաղմնային, նկարագրական վիճակից, որտեղ անգամ անցած իրադարձությունների համաձայնությունն չկա, եւ հանգել (ինչպես դա պատահել է կենսաբանության վերաճած բուսաբանության եւ կենդանաբանության հետ) աշխատող տեսությունների: Ռուսաստանցի տնտեսագետ Ռեւոլդ Էնտովը նշում է. «Տնտեսական շրջափոխի տեսությունը զարգանում է արդեն գրեթե երկու հարյուրամյակ: Բայց երբեք եւ ոչ ոքի չի հաջողվել կանխատեսել ճգնաժամերից եւ ոչ մեկը»:

Երրորդ մարտահրավերը ծագում է Չինաստանից: Կդառնա՞ արդյոք այն ճգնաժամից առավել շահած երկիրը, թե՞ դրա պատճառով կընկղմվի քաոսի մեջ. ցանկացած ելք առավել նշանակալի ազդեցություն կգործի աշխարհի իրավիճակի վրա: Այժմ արդեն Պեկինը, Չինաստանում աշխատող օտարերկրյա ձեռնարկությունների պարտկոմների համակարգի միջոցով, ամեն ինչ գիտի նրանց գործարքների ու ֆինանսների մասին: Բացահայտ հայտարարություններ են հնչում այն մասին, թե Չինաստանը չի պատրաստվում օգնել որեւէ մեկին (հարյուր հազարավոր արեւմտյան նման ընկերություններ արդեն փլուզվել են) կամ որեւէ մեկի հետ կիսել իր պահուստները: Գրոհ է նախաձեռնվում դոլարի դեմ, եւ Պեկինը, հենվելով անհասկանալի է, թե ինչի վրա հույսը դրած Մոսկվայի վրա, պահանջում է ԱՄՅ-ի բարեփոխումներ անցկացնել եւ վստահորեն շարժվում է յուանը պահուստային արժույթ դարձնելու ուղղությամբ, դրան զուգընթաց (Պարսից ծոցի երկրների հետ միասին) ամբողջությամբ գնելով Աֆրիկայի ընդերքն ու հողերը: Եթե ՉԺՅ-ի համար ամեն ինչ հաջող դասավորվի, դա պարզապես վերադարձ չի լինի այն իրավիճակին, երբ ոչ թե Արեւմուտքը, այլ Արեւելքն էր առաջատարը տեխնիկական առումով: Չինաստանը կստանա մոլորակային մասշտաբի դիկտատորի վերածվելու բոլոր հնարավորությունները: Հակառակ պարագայում, անկում ապրելով՝ այն լրիվ ի վիճակի է իր հետեւից տանել զարգացած պետություններին:

**«Россия в глобальной политике»
№ 6, 2009**

ՊՈԼՍՈ ՅԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ԵՎ ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՅԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ռուբեն Մելքոնյան

Պատմական դեպքերի եւ զարգացումների արդյունքում 15-րդ դարում ստեղծված Կոստանդնուպոլսի Յայոց պատրիարքարանը, բացի հոգեւոր-կրոնականից, ունեցել է եւ ունի նաեւ աշխարհիկ-քաղաքական գործառույթներ՝ կապված թուրքիայում ապրող հայության հետ: Օսմանյան կայսրությունում եւ այնուհետեւ թուրքիայի Յանրապետությունում բնակվող հայության տարբեր խնդիրների նկատմամբ պատրիարքարանի կեցվածքին եւ արած քայլերին զուգահեռ՝ հետաքրքիր է դիտարկել նաեւ նրա մոտեցումներն ու քաղաքականությունը հատկապես Յայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայերի հարցի վերաբերյալ: Դիտարկելով Պոլսո Յայոց պատրիարքարանի քաղաքականությունը շուրջ հարյուր տարվա կտրվածքով՝ տեսնում ենք որդեգրած մոտեցումների եւ մարտավարության որոշակի տարբերություններ, փոփոխություններ, որոնք արվել են ժամանակի եւ հանգամանքների թելադրանքով:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, պարտված Օսմանյան կայսրության ղեկավարության առջեւ Անտանտի ուժերի աջակցությամբ բարձրացվել է Յայոց ցեղասպանության տարիներին առեւանգված եւ բռնի իսլամացված հայերի խնդիրը: Մասնավորապես, պահանջվել է մուսուլմանական ընտանիքների կողմից առեւանգված հայ կանանց եւ երեխաներին վերադարձնել իրենց ընտանիքներին, իսկ այդպիսիք չլինելու դեպքում հայկական կամ քրիստոնեական կազմակերպություններին: Այս հարցում լուրջ դերակատարում է վերապահվել Պոլսո Յայոց պատրիարքարանին, որը դարձել է Յայոց մնացորդաց փրկության գործի առաջամարտիկը: Մասնավորապես, ստեղծվել են հանձնախմբեր, որոնք ուսումնասիրել եւ տեղեկություններ են հավաքել այդ տարիներին առեւանգված ու բռնի կրոնափոխված հայերի բնակության վայրերի եւ կարգավիճակների մասին, որից հետո սկսվել է այդ բեկորների փրկության, այն է՝ մուսուլմանական ընտանիքներից ազատելու գործընթացը:

Յայ որբերի եւ կանանց ազատելու հետ կապված աշխատանքները առավել ակտիվ սկսվում են 1919թ., Պոլսո պատրիարք Ջավեն Տերեղիայանի (1913–1916, 1918–1922թթ.) երկրորդ գահակալության տարիներին: Այն ժամանակվա օսմանյան կառավարությունը՝ ի դեմս ներքին

գործերի նախարարության, 1919թ. փետրվարի 5-ին հատուկ հրաման է ուղարկում նահանգներ, որտեղ ասվում էր. «Մուսուլման ընտանիքների մոտ գտնվող հայ կանանց եւ երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողովին»: Այս հրամանը, որը ներկայումս էլ պահվում է Թուրքիայի վարչապետի աշխատակազմի օսմանյան արխիվում, ոչ թե կառավարության բարի կամքի դրսևորումն էր, այլ լուրջ ճնշման եւ պարտադրանքի արդյունք: Ուշագրավ է, որ անդրադառնալով այս հրամանին՝ շատ թուրք գիտնականներ դա քննադատում եւ համարում են այն ժամանակվա կառավարության թուլության ապացույց:

Իհարկե, հայության բեկորներին փրկելու գործընթացը բախվում էր մի շարք խոչընդոտների, որոնցից էր, օրինակ, այն, որ շատ հայուհիներ երեխաներ էին ունեցել իրենց առեւանգիչներից եւ կանգնած էին բարդ երկընտրանքի առջեւ՝ թողնել երեխային եւ վերադառնալ ակունքների՞ն, թե՞ մնալ ցկյանս գերության եւ տանջանքի ճիրաններում: Պետք է նշել, որ այդ ժամանակաշրջանում եղել են դեպքեր, երբ որոշ թվով հայուհիներ, անչափահաս հայ աղջիկ երեխաներ նախընտրել են մնալ իրենց առեւանգիչների հետ: Հենվելով այս հանգամանքի վրա՝ թուրքական մի շարք աղբյուրներ պնդում են այն միտքը, թե այդ հայուհիները կամովին էին ընտրել իրենց ամուսիններին, եւ հանձնաժողովը բռնանում էր նրանց կամքի վրա ու ստիպողաբար վերադարձնում դեպի հայկականություն: Թուրքական կողմը ներկայումս շրջանառության մեջ է գցել նաեւ այն անհեթեթ միտքը, թե մուսուլմանների կողմից առեւանգված հայերի ազատման ընթացքում Պոլսո Յայոց պատրիարքարանի աջակցությամբ հավաքվել են նաեւ մուսուլման թուրք, քուրդ երեխաներ եւ ներկայացվել իբրեւ հայեր՝ սրանով նպատակ ունենալով ավելացնել հայերի թիվը: Թուրք գիտնականները դա անվանում են բռնի քրիստոնեացման գործընթաց: Անշուշտ, չի բացառվում, որ այդ ընթացքում կարող էին որոշ անճշտություններ ի հայտ գալ, սակայն գերակշիռ դեպքերում որպես թուրք կամ քուրդ մուսուլման ներկայացվող երեխաները մանուկ հասակում իրենց արմատից կտրված եւ մի քանի տարի մոլի իսլամական ոգով դաստիարակված հայ երեխաներն էին, որոնց մոտ գրեթե կորել էր հայկական ծագման հիշողությունն ու գիտակցությունը:

Ինչեւէ, ստեղծված հանձնախմբերի չորսամյա (1919–1922թթ.) գործունեության արդյունքում հազարավոր հայեր են ազատվում մուսուլմանական ընտանիքներից եւ վերադառնում իրենց ակունքներին ու կրոնին: Ամփոփելով աշխատանքների այդ փուլը՝ 1921թ. սկզբին Պոլսո Յայոց պատրիարքարանը պատրաստել է զեկույց, որի անգլերեն տարբերակն ուղարկվում է ԱՄՆ արտաքին գործերի նախարարություն: Ըստ

այդ զեկույցի, 1921թ. դրությամբ մուսուլմանների ընտանիքներում դեռևս մնում էին 63 000 հայ որբեր, որոնց բաշխվածությունը ըստ նահանգների ներկայացնում ենք ստորև.

Տեր-Ձորի շրջանի աշիրեթների մոտ՝ 3800; Ռեսուլայն շրջանի չեչեն աշիրեթների մոտ՝ 2000; Ստամբուլում եւ շրջակայքում՝ 6000; Իզմիթ, Բուրսա, Բալըքեսիր՝ 2000; Ինեբուլու՝ 1500; Եսքիշեհիր եւ Կոնիա՝ 3000; Քասթամոնու՝ 500; Տրապիզոն՝ 2500; Սեբաստիա՝ 3500; Կեսարիա՝ 3500; Էրզրում՝ 3000; Դիարբեքիր եւ Մարդին՝ 25000; Խարբերդ՝ 3000; Բիթլիս եւ Վան՝ 5000:

Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայ երեխաների եւ կանանց հարցով զբաղվել է նաեւ Ազգերի լիգան, որի որոշումով ստեղծվում է հետաքննող հանձնաժողով: Աշխատանքի արդյունքում պատրաստված զեկույցում նշվում է հայ երեխաներին եւ կանանց մուսուլմանական ընտանիքներից ազատելու հետ կապված տարատեսակ խոչընդոտների առկայության մասին եւ տրվում է նաեւ դրա բացատրությունը. «Այդ հանցանքին մեղսակից էր ողջ ժողովուրդը»: 1921թ. օգոստոսի 30-ին Լիգայի խորհրդին է ներկայացվում զեկույց, որի տվյալների համաձայն, մուսուլմանների տներից ազատվել են 90 819 հայ երեխա եւ կին, սակայն շուրջ այդքան էլ դեռ մնում են գերության մեջ: Երբ համադրում ենք այս փաստերը, տեսնում ենք, որ Հայոց պատրիարքարանի ներկայացրած 63 000 հայ որբերի առկայության մասին տվյալները, ինչ-որ տեղ, համընկնում են Ազգերի լիգայի տվյալների հետ եւ էլ ավելի համոզիչ դառնում:

Գավառներում մնացած եւ ուժացման տարբեր մակարդակներում գտնվող հայերի հարցը, այս կամ այն չափով, եղել է Պոլսո Հայոց պատրիարքարանի ուշադրության կենտրոնում նաեւ հետագայում: Մասնավորապես, կրոնափոխ հայերի խնդրի ուսումնասիրման եւ նրանց իրենց ակունքներին վերադարձնելու աշխատանքներ են կատարվել Գարեգին Խաչատուրյան պատրիարքի (1951–1961թթ.) օրոք: Այդ տարիներին սկսում են գավառներից քրդախոս հայ երեխաներ բերել Ստամբուլի հայկական կրթօջախներ: 1961թ. Պոլսո Հայոց պատրիարք ընտրված Շնորհք Գալուստյանը (1961–1990թթ.) ոչ միայն ակտիվորեն զբաղվում է ուժացած հայության հարցերով, այլև գիտական հետազոտության է ենթարկում խնդիրը, տալիս թուրքիայում բնակվող հայության խմբային բաժանումներ, որոնք մինչեւ այժմ էլ օգնում են թեմայով զբաղվողներին: Այսպես, 1980թ. Երուսաղեմում խոսելով թուրքիայում բնակվող գավառահայության մասին՝ երջանկահիշատակ պատրիարքը նրանց բաժանում է չորս խմբի.

«ա. Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամաւոր կերպով իսլամացել են, խզուել են հայութիւնից եւ ապրում են թուրքերի մէջ: Սրանք են, որ մինչեւ միլիոնի հասնում են իրենց թուով:

բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրդական աշիրէթական ձեւերով ապրում են մեկուսի եւ չեն խառնուում: Խնուսի շրջանում հարիւր ընտանիքներ կան այդպիսիներից, որ գիտեն, թէ հայ են, գիտակցաբար իրենց մէջ ամուսնանում են եւ փափագում են վերադառնալ իրենց պապերի կրօնին, եթէ իրենց պայմանները ներեն:

գ. Կամայ թէ ակամայ իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են եւ Պոլիս հաստատուելուն պէս՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրութիւնը «էրմենի»-ով են փոխարինում:

դ. Բուն գաւառահայերը, որ պատիւ իրենց՝ հակառակ բոլոր զգալի եւ անզգալի դժուարութիւններին՝ հայ են մնացել եւ այսօր Ստամբուլի հայութեան մեծագոյն մասը նրանցից է բաղկանում»:

Հատկանշական է, որ հենց Շնորհք պատրիարքի գահակալութեան տարիներին եւ մեծապէս նրա ջանքերով է Էրմենի Վարթո հայտնի աշիրէթը տեղափոխվում Ստամբուլ, սկսում շփվել հայ համայնքի հետ:

Պոլսո ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը եւս բազմիցս անդրադարձել է իսլամացված հայութեան խնդրին եւ, օրինակ, 2007թ. մայիսի 30-ին մի հանդիպման ժամանակ հայտարարել է. «Պետք չէ մոռնալ նաեւ, որ տեղահանութեան ընթացքին, տեղահան ըլլալէ փրկուելու համար, մեծ թիւով հայեր մահմետականութիւնը ընդունեցին: Մենք զանոնք եւս մեզմէ կը նկատենք»:

Վերջերս Թուրքիայի իսլամացված հայերի խնդրին է անդրադարձել նաեւ Պոլսո պատրիարքարանը ներկայացնող եւ սպասվող աթոռակից պատրիարքի ընտրութիւններում հիմնական թեկնածուներից մեկը՝ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը: Թուրքական հեղինակավոր «Հյուրիյեթ» թերթին տված հարցազրույցում Արամ սրբազանը ասել է, որ իսլամացումներ տեղի են ունեցել նաեւ հանրապետական շրջանում, որից զերծ չի մնացել նաեւ իր ընտանիքը, որի մի հատվածը 1950-ական թվականներին ստիպված ընդունել է իսլամ եւ այսօր էլ ապրում է Դիարբեքիում՝ որպէս մուսուլման: Լրագրողի այն հարցին, թե քրիստոնեւոթյան եւ իր արմատներին վերադառնալ ձգտող էթնիկ հայերի նկատմամբ ինչպիսին է պատրիարքարանի վերաբերմունքը, Աթեշյանը պատասխանել է. «Թուրքիայում ցանկացած քաղաքացի կարող է դիմել անձնագրային բաժին եւ փոխել իր կրօնը: Սակայն չի նշանակում, որ քրիստոնեւոթյուն ընդունած մարդը մեր կողմից միանգամից հայ է ընկալվում: Դրա համար բավական

ժամանակ է պահանջվում: Կա վեցամսյա դասընթաց, որի ընթացքում նայում ենք, թե նա ինչքան է հավատարիմ իր արմատներին, եւ եթե տեսնում ենք իր արմատներին վերադառնալու համառություն, ապա պատրիարքարանը տալիս է համապատասխան փաստաթուղթ, որով տվյալ անձը կարող է զնալ անձնագրային բաժանմունք եւ փոխել կրոնը՝ ընդունելով քրիստոնեություն: Այնուհետեւ այդ մարդը կնքվում է եւ դառնում Հայ Առաքելական եկեղեցու անդամ»:

Հայտնի է, որ մոտ ժամանակներս սպասվում են Պոլսո աթոռակից պատրիարքի ընտրություններ եւ կարող ենք ասել, որ բոլոր թեկնածուներն էլ (Սեպուհ եպիսկոպոս Չուլջյան, Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյան, Արամ արքեպիսկոպոս Աթեշյան) այս կամ այն կերպ անդրադարձել են ուժացած հայության եւ նրա այսօրվա խնդիրներին:

Այսպիսով, տեսնում ենք, որ բռնի կրոնափոխված հայության հարցը տարբեր ժամանակներում եղել է Պոլսո Հայոց պատրիարքարանի մտահոգությունների թվում, եւ 20-րդ դարի սկզբից Պոլսո բոլոր պատրիարքները, կամա թե ակամա, բախվել եւ բախվում են կրոնափոխ հայության խնդիրներին:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԿՆԵՐՈՆ

Արեստակես Սիմավորյան

Պետք է ասել, որ Թուրքիայի հայ կաթոլիկ համայնքի գործունեությանը թե՛ հայկական, թե՛ թուրքական լրատվամիջոցները հազվադեպ են անդրադառնում, այն էլ՝ ոչ լիարժեք: Հայկական կողմի «թերացումը» պայմանավորված է մի շարք խոչընդոտներով, իսկ թուրքական կողմը սահմանափակվում է մակերեսային տեղեկատվությամբ՝ շեշտելով միայն համայնքի գոյության մասին, ինչն, անշուշտ, նպատակային քաղաքականություն է՝ միտված այդ երկրում հայության դավանանքային տարանջատվածության թմբկահարմանը:

Ե՞րբ է առաջացել Թուրքիայի հայ կաթոլիկ համայնքը: Հայտնի պատմական իրողություն է, որ Օսմանյան կայսրությունում հայերի կաթոլիկացման նախաձեռնող ուժ է հանդիսացել Վատիկանը, որի ընդունած որոշումների արդյունքում Արեւմտյան Հայաստան են ուղարկվել միսիոներական խմբեր, որոնք էլ զանազան միջոցներով դավանափոխ են արել հայության փոքրաթիվ մի հատվածի:

Կաթոլիկություն ընդունեցին գլխավորապես գյուղաբնակները, նրանք, ովքեր այդ կերպ փորձում էին խուսափել թուրքացումից, իսլամացումից, բնականաբար նաեւ ֆիզիկական բնաջնջումից:

Հայ կաթոլիկների նկատմամբ թուրքական հալածանքներին վերջ տրվեց Հռոմի պապի եւ եվրոպական պետությունների միջամտությունից հետո: Արդյունքում՝ 1830թ. թուրքական սուլթանը հայ կաթոլիկներին ճանաչեց որպես առանձին «հայկական կաթոլիկ ազգ»՝ թույլատրելով նրանց հոգեւոր առաջնորդ ունենալ: Այս ամենն էլ ավելի խորացրեց Հայության տարանջատումը, առավել եւս, երբ 1847թ. առանձին միլլեթի կարգավիճակում հայտնվեցին հայ բողոքականները:

Արդեն 19-րդ դ. 20-ական թվականներին Ստամբուլում բնակվում էին մեծաթիվ հայ կաթոլիկներ, չհաշված այլ քաղաքներում եւ գյուղերում բնակվողները: Կասկածից վեր է, որ Օսմանյան կայսրությունը հայերի նկատմամբ վարում էր երկդիմի քաղաքականություն: Մի կողմից՝ առանձին համայնքի (միլլեթի) ստեղծումով նա փորձ էր կատարում կրոնական հողի վրա հայերի միջեւ պառակտիչ եւ բաժանարար գծեր ստեղծել, մյուս կողմից՝ գիտակցում էր, որ նորաստեղծ համայնքի հետ

խնդիրների առաջացման դեպքում հաշվի էր նստելու եվրոպական երկրների, հատկապես Չոռնի հետ:

Ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության հպատակ հայ կաթոլիկները եւս անմասն չմնացին կոտորածներից, բռնի իսլամացման գործընթացներից: Տարբեր տվյալներով՝ 150 հազարի հասնող հայ կաթոլիկներից կայսրությունում կենդանի մնաց շուրջ 20 հազարը, որոնք էլ հիմնականում, բռնագաղթի հետեւանքով, բնակություն հաստատեցին Լիբանանում, Սիրիայում, Ֆրանսիայում, մի մասն էլ պահպանեց ներկայությունը Կոստանդնուպոլսում, Անկարայում:

Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը նույն կարգավիճակում թողեց հայ կաթոլիկ համայնքը, որն այդ տարիներին ծանր օրեր էր ապրում:

Ցեղասպանությունից հետո Թուրքիայի հայ կաթոլիկ համայնքի թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները բավական կցկտուր են. որոշ տվյալների համաձայն, 1970-ական թթ. համայնքի թվաքանակը եղել է շուրջ 14 հազար, թեւեւ այս թիվը կասկածելի է, քանի որ Չոռնի տվյալները ցույց են տալիս, որ համայնքն այդ թվականներին ուներ շուրջ 8500 անդամ: 1980թ. համայնքը էապես կրճատվեց. անդամների թիվը հասավ 4500-ի: Թուրքիայի քաղաքական անկայուն իրավիճակը, ռազմական հեղաշրջումներն ու ճնշումները հայության վրա ստիպեցին համայնքի մեծ մասին արտագաղթել Ֆրանսիա, Կանադա եւ ԱՄՆ: Չի բացառվում, որ արտագաղթի կազմակերպման հարցում կարելուր դեր էին խաղում արեւմտյան երկրները:

Անկախ այս ամենից, Թուրքիայի ներկայիս հայ կաթոլիկ համայնքն ունի շուրջ 3650 անդամ, որոնք հիմնականում բնակվում են Ստամբուլ եւ Անկարա քաղաքներում՝ ենթարկվելով Ստամբուլի արքեպիսկոպոսությանը:

Ի տարբերություն Ստամբուլի՝ Անկարայի հայ կաթոլիկ համայնքը կազմակերպված չէ: Սա Հայ Կաթոլիկ եկեղեցու բացթողումներից է, թեւեւ դժվարությունները կապված են նաեւ վերջին տարիներին Թուրքիայում այլ կաթոլիկ համայնքների հոգեւոր ղեկավարների սպանությունների հետ. նման քայլերը կարող են հոգեբանական ներգործություն ունենալ համայնքներն սպասարկող քահանաների վրա, ինչի պատճառով էլ Անկարայի հայ կաթոլիկներն ապրում են մեկուսացված: Նույնիսկ Ստամբուլի նույնադավան համայնքի հետ որեւէ առնչություն չունեն: Միայն առիթից առիթ քաղաք են այցելում Ստամբուլի քահանաները, որոնք փորձում են համախմբել շուրջ 60 ընտանիք ունեցող համայնքը: Փաստացի այսօր

Անկարայի հայ կաթոլիկները սեփական եկեղեցի չունեն, իսկ դա նպաստավոր կլիներ համախմբման համար, բայց Թուրքիայում նման հարց բարձրացնելը կապված է հսկայական դժվարությունների հետ: Այս ամենի հետեւանքով հայ կաթոլիկներն ստիպված են հավաքվել ֆրանսիական եկեղեցում, որտեղ պատարագները կատարվում են միայն թուրքերենով, քանի որ համայնքն ամբողջապես թրքախոս է:

Ցավոք, Անկարայի հայ կաթոլիկներն ընդհանրապես չեն տիրապետում հայերենին եւ, որոշ փաստերի համաձայն, նպատակ էլ չունեն տիրապետելու: Օրինակ, անկարաբնակ հայ կաթոլիկ Յանրին նշում է. «Բնավ էլ չեմ ցանկացել, որ իմ զավակները հայերեն իմանան: Այստեղ ոչ մի տեղ հայերենը պետք չէ, դպրոց էլ չկա Անկարայում: Իմ զավակներին հայերենը ոչինչ չէր տա»: Յայերն Անկարայում ապրում են որպես Թուրքիայի քաղաքացիներ եւ հայ լինելու մասին հիշում են այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը պատահաբար հիշեցնում է:

Այլ է իրավիճակը Ստամբուլում, որտեղ գտնվում է Թուրքիայի հայ կաթոլիկ համայնքի արքեպիսկոպոսությունը՝ Կ.Պոլսի թեմը: Նշենք, որ այստեղ բնակվում է համայնքի 2000 անդամ, որոնք բավական կազմակերպված են եւ ունեն ոչ միայն համայնքապատկան եկեղեցիներ, այլեւ բարեգործական կառույցներ, ինչը որոշակիորեն թեթեւացնում է համայնքի առջեւ ծառայած խնդիրները:

Ստամբուլում գործում է 12 հայկական կաթոլիկ եկեղեցի, ընդամենը մեկ եկեղեցի է գործում Մարդին քաղաքում, որից օգտվում են մեկուսի պայմաններում ապրող մի քանի ընտանիքից բաղկացած հայ կաթոլիկները: Այստեղ ստամբուլցի քահանաներն այցելում են ամսական մեկ անգամ, հիմնականում պատարագների մասնակցելու համար:

Գրեթե բոլոր համայնքապատկան կառույցները կենտրոնացված են Ստամբուլում՝ կատարելով ազգանպաստ գործ: Յամայնքի ներսում մեծ աշխատանք են կատարում երիտասարդական միությունները, Տիկնանց միությունը: Եթե Անկարայում հայ կաթոլիկ համայնքը զրկված է նախակրթարաններից, ապա այստեղ գործում է չորս դպրոց, որոնցում սովորում է հինգ հարյուրից ավելի դպրոցական:

Ինչպիսի՞ն է հայ կաթոլիկների նկատմամբ վերաբերմունքն այդ երկրում: Թուրքական մամուլում սույն համայնքի մասին ցանկացած անդրադարձ շահարկման առարկա է դառնում: Քուրջաթ Քահրամանօղլուն, օրինակ, իր հոդվածներից մեկում հայ առաքելականների եւ կաթոլիկների միջեւ մարդկային որակների համեմատական եզրեր է անցկացնում, փորձում սրել երկու համայնքների հարաբերությունները:

Այսպես. «...չնայած հայ կաթոլիկները թվաքանակով քիչ են, սակայն իրենց հայ առաքելականներից ավելի վեր են դասում եւ նրանց մի տեսակ վերելից են նայում», – նշում է հեղինակը:

Այսօրինակ կարծիքներ, ցավոք, հնչում են նաեւ Ստամբուլի հայ համայնքի ներկայացուցիչների կողմից: Օրինակ. «... վաղուց հայտնի է, որ էթեն Մահճուլայանի («Ակօս» թերթի գլխավոր խմբագիր, հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչ – Ա.Ս.) նման թուրքախոս ու օտարամետ հայեր ուզում են համայնքի թե՛ նյութական աղբյուրները, եւ թե՛ վարչական մարմինները վերահսկել: Առայժմ չեն կարողանում: Բայց որ Մահճուլայանն այդ գործը շարունակում է Դինքի մահից հետո, հաստատ է: Սա պատրիարքարանից անկախ, աթեիստ ու թուրքախոս հայերից նոր համայնք ստեղծելու փորձ է: Հետո այս անձը, կաթոլիկ լինելով, ի՞նչ իրավունքով է համարձակվում միջամտել մեր համայնքի գործերին: Փաստ է, որ Ստամբուլի կաթոլիկ համայնքը առաքելականից անջատ մի զանգված է: Վեհափառի այցելության ժամանակ անգամ չէին գնացել իրենց եկեղեցի նրան ողջունելու»:

Այսպիսի հատուկեմտ տեսակետները ենթադրել են տալիս, որ հայ կաթոլիկ համայնքի նկատմամբ վերաբերմունքն այնքան էլ դրական չէ եւ չի կարող նպաստել Թուրքիայի հայության համախմբմանը:

Թուրքիայի հայ կաթոլիկ համայնքում տեղի ունեցող տարաբնույթ գործընթացների մասին պատկերացումները բավական աղոտ են, եւ դրա հիմնական պատճառը տեղեկատվության բացակայությունն է, ինչը թույլ չի տալիս ավելի խորությամբ դիտարկել վերջիններիս շրջանում տեղի ունեցող զարգացումները, հայապահպանությանն առնչվող խնդիրները:

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ
Հայկ Գաբրիելյան**

2009 թվականի դեկտեմբերի 21-ին թուրքական կառավարության նոր շենքում կայացած նախարարների խորհրդի նստաշրջանում որոշում ընդունվեց Արտասահմանում բնակվող թուրք քաղաքացիների հարցերով գերատեսչության ստեղծման մասին: Նախագիծը պատրաստվել է արտասահմանաբնակ թուրք քաղաքացիների իրավունքների պաշտպանության գծով պետնախարար Ֆարուք Չելիքի կողմից:

Նստաշրջանի ավարտին փոխվարչապետ եւ կառավարության խոսնակ Ջեմիլ Չիչեքը հայտարարեց, որ եկել է թուրքական սփյուռքի նախարարության ստեղծման ժամանակը. «Շատ տարիների ընթացքում Թուրքիան ստիպված է եղել տարբեր խնդիրների շուրջ բախվել հայկական, հունական եւ այլ լոբբիների հետ, այժմ եկել է ժամանակը՝ ստեղծելու զորեղ թուրքական լոբբի, եւ համապատասխան նախարարությունը կնպաստի այդ գործընթացին: Ներկայում արտասահմանում բնակվող 220 միլիոն *թյուրքերի* հետ մեկտեղ, բնակվում է մոտ 5 միլիոն թուրք, եւ մենք անտարբեր չենք կարող լինել նրանց կենսակերպի ու խնդիրների նկատմամբ: Մեր պետությունը կօգնի նրանց՝ լուծելու իրենց խնդիրները»:

Այս նախագիծը հաստատման համար պետք է ուղարկվի թուրքական խորհրդարան: Կարելի է կարծել, որ խորհրդարանն անպայման կհաստատի դա, քանի որ ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունները կաջակցեն այդ նախագծին: Պատճառն այն է, որ նմանատիպ հարցերում վերոնշյալ ընդդիմադիր կուսակցությունները հանդես են գալիս առավել խիստ դիրքերից, քան իշխող ԱԶԿ-ն:

Արտասահմանաբնակ թուրքերի ու ազգակից համայնքների գերատեսչության ղեկավար կազմն ունենալու է հետեւյալ պատկերը. 1 ղեկավար, 7 բաժնի պետ եւ 50 մասնագետ: Գերատեսչության կառույցի մեջ են մտնելու Արտասահմանաբնակ քաղաքացիների հարցերով վարչությունը, Ցեղակից ու ազգակից համայնքների վարչությունը, Հասարակական կապերի վարչությունը, Ուսանողների միջազգային վարչությունը, Ռազմա-

վարական զարգացման ու աջակցման վարչությունը: Որպես առանձին միավոր՝ գերատեսչության ենթակայության ներքո գործելու է անգլիախոս երկրներում բնակվող թուրքերի ենթավարչությունը: Դա պատահական չէ, քանի որ թուրքական լրբբիստական կազմակերպությունների հիմնական ուղղվածությունը հանդիսանում են հենց այդ երկրները (մասնավորապես՝ ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան): Նախատեսվում է նաեւ ստեղծել տարածաշրջանային բաժանմունքներ բոլոր այն երկրներում, որոնցում պետք է իր գործունեությունը ծավալի թուրքական սփյուռքի նախարարությունը:

Առաջին փուլում նախատեսված է աշխատանքներ տանել Ամերիկայում, Կանադայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Անգլիայում, Հոլանդիայում, Բելգիայում, Լյուքսեմբուրգում, Դանիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայում, Ավստրալիայում ու Նոր Զելանդիայում: Սա պայմանավորված է նրանով, որ այդ երկրներում առկա է թուրքական քիչ թե շատ հոծ բնակչություն:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա Ամերիկայում թուրքական միությունների դաշինքի (ԱԹՄԴ, TADF) նախագահ Քայա Բոզթեփեի տվյալներով՝ այնտեղ բնակվում է շուրջ 500.000 թուրք: Բացի այդ, կան նաեւ 2 միլիոն *թյուրքեր*՝ ադրբեջանցիներ, թուրքմեններ, ուզբեկներ եւ այլն: Բոզթեփեն հայտարարել է, որ իրենք ձգտում են 2.5 միլիոնանոց այդ զանգվածը վերածել առավել համախմբված ու կազմակերպված ուժի: Այդ նպատակին է ծառայում նաեւ ԱՄՆ-ում բնակվող թուրքերին ամերիկյան քաղաքացիություն տրամադրելու համար ԱԹՄԴ-ի ձեռնարկած արշավը:

Թուրքական սփյուռքի նախարարության ստեղծման հիմնական նպատակներն են.

1. Արտասահմանում տարվող լրբբիստական աշխատանքների ուժեղացում:

2. Արտասահմանում բնակվող եւ ուսանող թուրքերի ու նրանց ազգակից համայնքների գործողությունների պլանավորում ու կոորդինացում, PR գործունեության ծավալում:

Թուրքական լրբբիստական կազմակերպությունների ծավալած գործունեությունը Թուրքիայի անվտանգության հայեցակարգի բաղկացուցիչ մասերից է: Թուրքական նորաստեղծ այս գերատեսչությունը մեծածավալ աշխատանքներ է իրականացնելու՝ ամեն գնով Հայաստանի ու Սփյուռքի միջեւ սեպ խրելու ուղղությամբ: Բացի այդ, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ բացասական իմիջ ձեւավորելու աշխատանքներ են տարվում:

Իսկ ինչո՞ւ Արտասահմանաբնակ թուրքերի եւ ազգակից համայնքների գերատեսչության ստեղծման խնդիրն արդիականացավ հենց հիմա, ո՞ր հանգամանքները նպաստեցին դրա ստեղծմանը.

1. Թուրք-ամերիկյան հարաբերությունները: 2009 թվականի վերջին ԱՄՆ-ը Թուրքիային առաջարկեց ռազմական կոնտինգենտ ուղարկել Աֆղանստան, որպեսզի դրանով իսկ նվազեցնի իր զինուժի կորուստներն այդ երկրում: Սակայն Թուրքիան մերժեց այդ առաջարկը: Թուրքիայում կարծիքներ են հնչում, որ 2010 թվականի գարունը երկրի համար լինելու է ամենավճռորոշը: Մատնանշվում է, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հայ-թուրքական արձանագրությունների առունով Էրդողանի համար որպես վերջնաժամկետ է սահմանել 2010 թվականի ապրիլի 24-ը: Եվ քանի մոտենում է այդ ժամկետը, այնքան մեծանում է թուրքական կողմի մտահոգությունը՝ կապված Օբամայի կողմից Հայոց ցեղասպանության արտաբերման հետ: Դրա համար էլ ԱՄՆ-ում ակնկալվում է հայկական ու թուրքական լրբբիների պատերազմի մի նոր փուլ: ԱՄՆ արդարադատության նախարարության տվյալներով՝ 2008 թվականին Թուրքիան, մյուս երկրների համեմատ, ամենաշատն է ԱՄՆ Կոնգրեսում լրբբինգի ենթարկել իր շահերը (2268 անգամ): Սիենույն ժամանակ, այդ գործունեության վրա ծախսած գումարի չափով օտար երկրների շարքում Թուրքիան զբաղեցրել է 4-րդ տեղը (4.2 միլիոն դոլար)՝ այդ ցուցանիշով զիջելով միայն ԱՄԷ-ին (11 միլիոն դոլար), Մեծ Բրիտանիային (6 միլիոն դոլար) ու Ճապոնիային (4.22 միլիոն դոլար): Թուրքական լրբբինգի գործունեության ակտիվության զագաթնակետը գրանցվել է 2007 թվականի վերջին, երբ Կոնգրեսը քննարկում էր Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ճանաչման փաստը: Այդ ժամանակ թուրքական լրբբիի ներկայացուցիչները մեկ ամսվա ընթացքում 673 հանդիպում են ունեցել ամերիկյան կոնգրեսականների ու հրեական լրբբիի ներկայացուցիչների հետ:

2. Թուրք-իսրայելական հարաբերությունները: Վերջին շրջանում զգալիորեն սրվել են թուրք-իսրայելական հարաբերությունները՝ կապված մերձավորարևելյան տարածաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության կտրուկ փոփոխության հետ: Պետք է նշել, որ ժամանակին Թուրքիան մահմեդական երկրներից առաջինը ճանաչեց Իսրայել պետությունը եւ ցայժմ տարածաշրջանի մահմեդական երկրներից միակն էր, որ հանդիսանում էր Իսրայելի դաշնակիցը, ինչը շատ կարելու էր հատկապես վերջինիս համար: Այս պատճառով էլ մինչ այժմ Հայկական

սփյուռքի դեմ տեղեկատվական պայքարում թուրքական կողմին գործուն աջակցություն է ցուցաբերել հրեական լոբբին: Թուրք-իսրայելական լարված հարաբերությունների պատճառով թուրքական կողմը զրկվում է իր այդ հզոր դաշնակցից: Դա, մասնավորապես, վերաբերում է ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդրին: Այժմ իսրայելական կողմից Թուրքիայի հասցեին սպառնալիքներ են հնչում Հայոց ցեղասպանության ճանաչման եւ ԱՄՆ-ում թուրքական լոբբիին աջակցելուց զերծ մնալու (կամ նախկինի նման չաջակցելու) շուրջ: Թուրքական սփյուռքի նախարարությունն այս ուղղությամբ մեծածավալ աշխատանքներ տանելու խնդիր ունի:

3. Ասորական խնդրի վերարժարծումը: Թուրքիայի համար վերջին շրջանում հայտնվեց մի նոր գլխացավանք, որը մինչ այդ գտնվում էր սառեցված վիճակում: Դա Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան Թուրքիայի իրականացրած 750.000 ասորիների ցեղասպանության հիմնախնդիրն է: 2009 թվականի դեկտեմբերի 15-ին Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում կանգնեցվեց Ասորիների ցեղասպանության հուշարձանը, ինչի կապակցությամբ ավստրալական իշխանություններին բողոք հղեց Թուրքիայի արտգործնախարարությունը: Փաստորեն, սրանով Թուրքիայի համար առավել երկարեց իր իրագործած ցեղասպանությունների շարանը: Դրա համար էլ Թուրքիան ամեն գնով պայքարում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ՝ քաջ գիտակցելով, որ հայերից հետո գալու է ասորիների, ինչու ոչ՝ նաեւ հույների հերթը:

4. Թուրք-ադրբեջանական հարաբերությունները: Վերջին շրջանում շարունակում են լարված մնալ թուրք-ադրբեջանական հարաբերությունները, ինչը պայմանավորված է հայ-թուրքական արձանագրությունների ստորագրմամբ ու հնարավոր մերձեցմամբ: «Մեկ ազգ, երկու պետություն» հասկացությունը սկսեց լուրջ ճեղքվածքներ տալ 2009 թվականի հոկտեմբերի կեսին՝ երկու երկրների միջեւ տեղի ունեցած «դրոշների պատերազմի» (թուրք-ադրբեջանական «սառը պատերազմ») ժամանակ: Սակայն սխալ կլինի կարծել, թե թուրք-ադրբեջանական ներկայիս հակասությունները պայմանավորված են միայն հայկական գործոնով: Մասնավորապես, երբ վերջերս Թուրքիան սկսեց մերձենալ Իրանի ու Սիրիայի հետ, Ադրբեջանն անմիջապես պատրաստակամություն հայտնեց միանալու ԱՄՆ գլխավորած հակաիրանական կոալիցիային, իսկ Սիրիայի հարցում էլ կողմնորոշվեց դեպի վաշինգտոնյան մոտեցում-

ները: Ի տարբերություն թուրք-խորվաթական հարաբերությունների վատթարացման, ադրբեջանա-խորվաթական հարաբերությունները գտնվում են բավական լավ վիճակում: Ցայժմ Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղի պատճառով, չի ճանաչել Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը եւ նրա հետ չի հաստատել դիվանագիտական հարաբերություններ: Որոշակի խնդիրներ առկա են նաեւ Էներգետիկ ոլորտում:

5. Կիպրոսի խնդիրը: Այս խնդրի հարթումը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության պայմաններից մեկն է: Արդեն մի քանի տարի է, ինչ Թուրքիան ձգձգում է կիպրական նավերի ու օդանավերի առջեւ իր նավահանգիստների ու օդանավակայանների բացման վերաբերյալ ստանձնած սեփական պարտավորությունների իրականացումը: Այժմ թուրքական կողմը որոշակի դժվարություններ է կրում՝ կապված ԱՄՆ-ում հունական լրբբիստական կազմակերպությունների ծավալած գործունեության հետ: Վերջիններս ԱՄՆ Կոնգրեսում ժամանակ առ ժամանակ առաջ են քաշում «Կիպրոսը թուրքական օկուպացիայից ազատելու» վերաբերյալ բանաձեւեր, ինչը մեծ անհանգստություն է պատճառում Թուրքիային: Այժմ Թուրքիան շտապում է մինչեւ 2010 թվականի ապրիլն ավարտին հասցնել Հյուսիսային Կիպրոսի վերաբերյալ խաղաղության բանակցությունները, քանի որ այդ ժամանակ կղզում տեղի են ունենալու նախագահական ընտրություններ:

6. Թուրք-քրդական հարաբերությունները: 2009 թվականի վերջերից զգալիորեն սրվել են թուրք-քրդական հարաբերությունները, հատկապես, երբ Թուրքիայի Սահմանադրական դատարանը որոշում ընդունեց թուրքական խորհրդարանում հայտնված Դեմոկրատական հասարակարգ (ԴՀԿ) քրդական միակ լեզու կուսակցության փակման մասին: Բացի այդ, թուրք-քրդական հարաբերությունների վատթարացման գործում իրենց ուրույն տեղն ունեն քրդական Բանվորական կուսակցության (ՔԲԿ) գործունեությունն ու Աբդուլա Օջալանի բանտային պայմանների փոփոխությունը, ինչի կապակցությամբ իրենց բուռն դժգոհությունն արտահայտեցին քրդերը: 2008 թվականին ԱՄՆ-ում թուրքական լրբբինգի գործունեությունում Հայոց ցեղասպանության հիմնախնդրից հետո երկրորդ տեղը զբաղեցրել է ՔԲԿ-ն: Թուրքական կողմն ամեն կերպ ձգտում է ներկայում իրեն հազար տարվա պատերազմով սպառնացող ՔԲԿ ահաբեկչական բնույթի վրա հրավիրել միջազգային հանրության ուշադրությունը:

7. Թուրքական, ինչպես նաև քյուրքական աշխարհի համախմբումը: Վերոնշյալ խնդիրների (եւ ոչ միայն) ուղղությամբ գործուն քայլերի իրականացումն առավել դյուրին ու արդյունավետ կդառնա նորաստեղծ նախարարության շնորհիվ: Վերջինս պետք է նպաստի արտասահմանաբնակ թուրքերի իրավունքների պաշտպանությանն ու կենսակերպի բարձրացմանը, հայրենիքի հետ կապերի պահպանմանն ու զարգացմանը: Այս ամենի համար առաջ են քաշվել 200 տարբեր նախագծեր, որոնցով այժմ զբաղվում են մոտ 30 պետիկմնարկներ: Թուրքական սփյուռքի նախարարության ստեղծումը դրանց ջանքերը մեկ կազմակերպության մեջ միավորելու հնարավորություն կընձեռի: Այսուհետ առավել նպատակահարմար կձևավեն նաև թուրքական սփյուռքի եկամուտները, ինչը գերազանցում է 40 միլիարդ եվրոյի սահմանագիծը:

ԹՈՒՐՔԻԱ – ԻՐԱՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արաքս Փաշայան

Միջազգային գործընթացների արդի փուլում առանձնահատուկ ուշադրության են արժանի Թուրքիայի եւ Միջին Արեւելքի առանձին ուժային կենտրոնների, այդ թվում՝ արաբական երկրների միջեւ զարգացող հարաբերությունները, որոնք, ըստ էության, ձեւավորում են աշխարհաքաղաքական նոր իրողություններ: Այդ տեսանկյունից առանձնակի կարեւորություն են ներկայացնում Թուրքիայի եւ Իրաքի միջեւ սերտացող հարաբերությունները, որոնք շաղկապված են ջրային եւ էներգետիկ ռեսուրսների, քրդական եւ թուրքմենական գործոնների, տարածաշրջանային անվտանգության, քաղաքական եւ առեւտրատնտեսական նշանակություն ունեցող մի շարք կարեւոր իրողություններով:

2003թ. Իրաք ԱՄՆ-ի ներխուժումը եւ Իրաքի մասնատման հնարավոր հեռանկարը անհանգստություն առաջ բերեցին Թուրքիայում: Թուրքական քաղաքական վերնախավին առաջին հերթին մտահոգում էր ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից քրդական գործոնի նշանակության կարեւորումը եւ դրա արդյունքում՝ Իրաքի հյուսիսում քրդական պետության ձեւավորման հնարավորությունը: Այդ հանգամանքը կարող էր նպաստել Թուրքիայի՝ ներքաղաքական առումով առանց այդ էլ անկայուն արեւելյան քրդաբնակ նահանգներում անկախական շարժումների, այդ թվում՝ Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) գործունեության ակտիվացմանը: Իրաքում քրդական վարչակարգի դիրքերի ամրապնդումը եւ դրան զուգահեռ՝ Քրդական ինքնավարությունում Մեծ Քուրդիստանի եւ Թուրքիայում քրդերի իրավունքների մասին հռետորականության ակտիվացումը մեծացրին լարվածությունը մի կողմից՝ Թուրքիայի եւ Իրաքի, մյուս կողմից՝ Թուրքիայի եւ Իրաքյան քրդերի հարաբերություններում: Արդյունքում՝ թուրքական բանակը Յյուսիսային Իրաքի լեռնային տարածքներում հաստատված ՔԲԿ հենակետերի եւ զինյալների դեմ տասնյակ մարտական գործողություններ իրականացրեց, իսկ 2008թ. փետրվարին թուրքական զորքերը լայնամասշտաբ ներխուժում իրականացրեցին Իրաքի հյուսիս: Դրան հետեւեցին Իրաքի իշխանությունների հայտարարություններն այն մասին, որ Թուրքիան ոտնահարում է Իրաքի ինքնիշխանությունը:

Իրաքի կենտրոնական իշխանության եւ Թուրքիայի միջեւ լարվածության մեկ այլ աղբյուր կապված էր (եւ մինչ օրս կապված է) թուրքական

Ժազուն ունեցող իրաքյան թուրքմենների էթնիկ իրավունքների եւ Քիրքուքի կարգավիճակի խնդրի հետ: Թուրքմեններն Իրաքում երրորդ ամենամեծ էթնիկ խումբն են արաբներից եւ քրդերից հետո եւ բնակվում են հիմնականում երկրի հյուսիսում, մասնավորապես՝ Սոսուլի, Էրբիլի, Սալահադդինի, Դիյալայի նահանգներում, թուրքմենական բնակչությամբ առանձնանում են Քիրքուք, Թալ Աֆար, Սոսուլ, Էրբիլ, Բաղդադ քաղաքները: Թուրքմենները (որոնց թվաքանակի վերաբերյալ կան տարբեր տվյալներ՝ 500.000-ից մինչեւ մի քանի միլիոն) ներկայացված են իրաքյան խորհրդարանում: Դեռեւս 1995-ին Թուրքիայի աջակցությամբ ստեղծվեց թուրքմենական ամենամեծ քաղաքական կառույցը՝ Իրաքի թուրքմենական ճակատը, որը 2003-ից ի վեր ձգտում է վերահսկողություն հաստատել թուրքմենաբնակ շրջաններում՝ «Թուրքմենելիում», ինչպես նաեւ նավթային ռեսուրսներով հարուստ Քիրքուքում: Ներկայումս Թուրքիայում կան հետազոտական կենտրոններ, որոնք ուսումնասիրում են իրաքյան թուրքմեններին առնչվող խնդիրները, ինչը միտված է Իրաքում թուրքմենների ազգային ինքնագիտակցության վերելքին եւ Թուրքիայում այդ հարցերին հնչեղություն տալու գործընթացին:

Անկարայի եւ Բաղդադի միջեւ հարաբերությունների կարգավորման հեռանկարներ բացվեցին 2008-ից ի վեր, ինչն ամրագրվեց բարձր մակարդակի բազմաթիվ փոխայցելություններով: 2008թ. մարտին Թուրքիա ժամանեց Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին, իսկ 2008-ի հուլիսին Բաղդադ այցելեց Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը, որի այցի շրջանակներում թուրք-իրաքյան հարաբերությունները հատուկ նշանակություն ձեռք բերեցին՝ կողմերի միջեւ ռազմավարական համագործակցության խորհուրդ ստեղծելու մասին կնքված պայմանագրով: 2009-ի մարտին Բաղդադում հյուրընկալվեց նախագահ Գյուլը: Վերջին անգամ Թուրքիայի նախագահը այցելել էր Բաղդադ 33 տարի առաջ՝ 1976-ին: Այն փաստը, որ Թուրքիայի նախագահն Իրաք էր ժամանել տիկնոջ հետ (ինչն անվտանգության շարժառիթներով դժվարանում են անել Իրաք այցելող շատուշատ բարձրաստիճան պաշտոնատարներ) խոսում էր այն մասին, որ Թուրքիան վստահում է Իրաքի իշխանությունների:

Իսկ 2009-ի հուլիսին վարչապետ Նուրի Ալ-Մալիքիի՝ Անկարա կատարած այցի ժամանակ Թուրքիայի եւ Իրաքի միջեւ կնքվեց մեկ այլ հուշագիր, համաձայն որի՝ իրաքյան գազը Թուրքիայի տարածքով կտեղափոխվի Եվրոպա:

2009թ. աշնանը տեղի ունեցավ ռազմավարական համագործակցության խորհրդի առաջին նիստը, որին մասնակցում էր նաեւ Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսան: Խորհուրդն

ունի երկու համանախագահներ՝ վարչապետների մակարդակով եւ ղեկավարվում է Թուրքիան եւ Իրաքը ներկայացնող ինը նախարարների կողմից, որոնք պետք է հանդիպեն տարին երեք անգամ՝ համակարգելու համագործակցությունը արտաքին, ներքին գործերի, անվտանգության, էներգետիկայի, տնտեսության, առևտրի, տրանսպորտի, առողջապահության եւ այլ ոլորտներում:

Իրաքի իշխանությունների համար Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացման կարևոր երաշխիք դարձան առաջին հերթին երկրի տարածքային ամբողջականությանը սատարելու, անվտանգության եւ կենսական այլ կարևոր ոլորտներում համագործակցելու, Իրաք ջրի բավարար քանակություն առաքելու Անկարայի հավաստիացումները: Իր հերթին, Թուրքիայի համար Իրաքի հետ հարաբերությունները բարելավելու համար անհրաժեշտ նախապայման դարձան ՔԲԿ՝ որպես ահաբեկչական կառույցի դեմ պայքարելու Իրաքի իշխանությունների հավաստիացումները: Իրաքի նախագահ Ջ.Թալաբանիի կոշտ արտահայտությունները ՔԲԿ-ի վերաբերյալ խոսում էին այն մասին, որ Բաղդադը հետաքրքրված է Անկարայի հետ հարաբերությունների բարելավմամբ: Ավելին, վարչապետ Նուրի Ալ-Մալիքիի կարծիքով՝ ՔԲԿ խնդիրը կարող է հանգեցնել թուրք-իրաքյան հարաբերությունների ճգնաժամի: Արդեն 2009թ. հունվարին Թուրքիան, Իրաքը եւ Միացյալ Նահանգները պայմանավորվածություն ձեռք բերեցին ՔԲԿ-ի դեմ համատեղ պայքարի վերաբերյալ:

Ներկայումս Իրաքի եւ Թուրքիայի հարաբերություններն ամրագրված են նաեւ էներգետիկ եւ առևտրատնտեսական մշանակություն ունեցող մի շարք պայմանագրերով: Այս երկու երկրները ձգտում են սահմանային շրջաններում ստեղծել արդյունաբերական եւ ազատ առևտրային գոտիներ, ինչը թույլ կտա Անկարային եւ Բաղդադին համաշխարհային շուկա արտահանել համատեղ արտադրության ապրանքներ: Բացի այդ, Իրաքում բավական մեծ են թուրքական շինարարական ընկերությունների գործունեության ծավալները: Նախատեսվում է, որ երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության ծավալները, որոնք ներկայումս կազմում են 7 միլիարդ, 2011-ին հասնելու են 20 միլիարդի: Նշենք, որ Իրաքը ներկայումս օրական 400 000 բարել նավթ է արտահանում թուրքական Ջեյհան նավահանգիստ:

Թուրքիա – Իրաք հարաբերությունների անքակտելի մասն են Թուրքիայի եւ իրաքյան Քուրդիստանի ռեգիոնալ կառավարության հարաբերությունները: Արդի փուլում դրական շրջադարձ է նկատվում ոչ միայն Բաղդադի եւ Անկարայի, այլեւ իրաքյան քրդական վարչակարգի եւ

Անկարայի հարաբերություններում, ինչը պայմանավորված է ՔԲԿ-ի դեմ պայքարելու քուրդ ղեկավարների խոստումներով: Այն բանից հետո, երբ 2008-ի վերջին իրաքյան քրդերը ռազմական օպերացիա իրականացրեցին ՔԲԿ զինյալների նկատմամբ, թուրքիան սկսեց բանակցային գործընթացը քուրդ պաշտոնատարների հետ: Անկարան փոխեց հռետորականությունը վերջիններիս նկատմամբ: Արդյունքում՝ Մ.Բարզանիի վարչակարգն ուղիղ կապեր հաստատեց Անկարայի հետ՝ կնքելով թուրք-քրդական համաձայնագիր: Նշենք, որ Իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաքում՝ Էրբիլում է գործում Թուրքիա–Իրաք–ԱՄՆ եռակողմ հանձնաժողովը, որը ստեղծվել է ՔԲԿ-ի դեմ պայքարելու համար: Երկկողմ հարաբերություններն առավել շոշափելի դարձան Թուրքիայի արտգործնախարար Ա.Դավութօղլուի՝ 2009թ. հոկտեմբերին Էրբիլ կատարած այցելությամբ:

Թուրք-քրդական հարաբերություններն, ըստ էության, հիմնված են փոխշահավետության վրա: Քրդերը, որոնք մտահոգված են մինչեւ 2011 թվականը Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման եւ արաբա-քրդական հնարավոր զինված բախման հեռանկարից, համարում են, որ Թուրքիան իրաքյան քրդերի համար կարող է հանդես գալ որպես անվտանգության երաշխավոր: Չնայած կան նաեւ քրդական շրջանակներ, որոնք չեն վստահում Թուրքիային եւ կարծում են, որ Իրաքից ԱՄՆ զորքերի դուրսբերումից հետո ինքնավարությունը մարտահրավերներ կստանա Իրանից, Թուրքիայից եւ այն արաբական երկրներից, որոնք դեմ են Քուրդիստան անկախ պետության ստեղծմանը: Քուրդ ղեկավարները, այնուամենայնիվ, կարծում են, որ Թուրքիան կարող է երաշխավորել նաեւ Քուրդիստանի տնտեսական ապագան. Թուրքիայի հետ շարունակական բարիդրացիական հարաբերությունները քրդերը կարող են օգտագործել նավթը Թուրքիայի տարածքով արտահանելու եւ արտաքին տնտեսական հարաբերություններ զարգացնելու համար: Անկարան եւ Էրբիլն այլեւս ընթանում են տնտեսական ինտեգրման ճանապարհով: Ներկայումս քրդական ինքնավարությունում գործում են թուրքական ավելի քան 400 ընկերություններ:

Իր հերթին, Թուրքիան իրաքյան քրդերի հարցում պատրաստ է ստանձնել առկա պարտավորությունները՝ պայմանով, որ վերջիններս ՔԲԿ հարցում չնահանջեն իրենց խոստումներից: Թուրք-քրդական հարաբերություններում կարելի է գործոն են նաեւ Քիրքուքի եւ ընդհանրապես՝ քուրդ-թուրքմենական՝ ներկայումս զգալիորեն լարված հարաբերությունների հարցը: Հայտնի է, որ քրդերը ցանկանում են, որպեսզի Քիրքուքի կարգավիճակի հարցը, որը շարունակաբար հետաձգվում է, լուծվի Իրաքի սահմանադրության 140 կետի համաձայն:

Այն նախատեսում է հանրաքվեի անցկացում, որից հետո Քիրքուքը կներառվի քրդական ինքնավարության կազմում՝ նկատի ունենալով այն փաստը, որ երկրամասի բնակչության մեծ մասը քրդեր են: Հատկանշական է, որ այդ գաղափարին աջակցում է նաև ԱՄՆ վարչակազմը, որն, առանձին տվյալների համաձայն, Իրաքից զորքերը դուրս բերելուց հետո կշարունակի պահպանել դիրքերն իրաքյան Քուրդիստանում: Նշենք, որ մինչ օրս Քիրքուքի խնդրի կարգավորման բազմաթիվ տարբերակներ են մշակվել: 2009 թվականին ՄԱԿ հատուկ հանձնախումբը հրապարակեց Քիրքուքի մասին առանձին զեկույց, որտեղ առաջ են քաշված կարգավորման մի քանի տարբերակ: Հետաքրքրություն են ներկայացնում հատկապես այն երկու տարբերակները, որոնցից մեկով նախատեսում է երկրամասում ստեղծել երկու իշխանությունների՝ Բաղդադի եւ Երբիլի համատեղ կառավարման մեխանիզմ, իսկ մյուսը նկատի է առնում Քիրքուքին հատուկ կարգավիճակի շնորհում, տարբերակ, ինչը ձեռնառու է թուրքմեններին, որոնք տեղի բնակչության շուրջ 12 տոկոսն են:

Հատկանշական է, որ Թուրքիան բավական սերտ կապեր ունի Իրաքի սուննի, ինչպես եւ շիա խմբավորումների հետ: Ասվածի ապացույցն է 2009թ. մայիսին Մահդիի բանակի առաջնորդ, շիա ազդեցիկ գործիչ Մուկթադա Աս-Սադրի այցելությունն Անկարա, որտեղ նրան ընդունեցին երկրի նախագահն ու վարչապետը:

Հարկ է նշել, որ չնայած երկկողմ հարաբերություններում առկա զգալի ձեռքբերումներին, այն դեռեւս փխրուն վիճակում է, որի ապացույցը 2009-ի աշնանը Իրաքի եւ Թուրքիայի միջեւ ջրի խնդրի հետ կապված հերթական լարվածության առաջացումն էր: Իրաքի իշխանությունները մեկ անգամ չէ, որ բողոքել են, թե Թուրքիայից չեն ստանում խոստացված ջրաբաժինը: Մինչդեռ թուրքական կողմի պնդումներով՝ իրենք կատարել են խոստումը եւ Իրաքին հատկացրել խոստացված 500-ից շատ՝ ընդամենը 517 խմ ջուր, ինչն առավելագույնն է, որ Թուրքիան կարող է տրամադրել Իրաքին: Երկու երկրների ջրային խնդիրները որոշակիորեն առնչվում են նաև Սիրիային, որի տարածքով է ջուրը հասնում Իրաք: Իրաքցի պաշտոնատարների կարծիքով՝ չի բացառվում, որ ջրի ոչ բավարար քանակությունը ստեղծվում է Սիրիայի մեղքով: Նշենք, որ 2008-ից ի վեր Եփրատի եւ Տիգրիսի ջրային ավազանից օգտվող երեք երկրները զգալի քայլեր են կատարել ջրային խնդիրները կարգավորելու ուղղությամբ, որոնք դեռեւս ոչ վաղ անցյալում զգալիորեն պայմանավորված էին քաղաքական իրողություններով: 2009թ. սեպտեմբերին երեք երկրների միջեւ ջրային խնդիրների շուրջ համագործակցության հուշագիր է

ստորագրվել, իսկ ներկայումս ջրային հարցերով զբաղվող եռակողմ հանձնախումբ է գործում:

Այսպիսով, բազմակողմ համագործակցությունը Բաղդադի հետ Անկարային հնարավորություն է տալիս ոչ միայն իրականացնել իր քաղաքական եւ տնտեսական հետաքրքրություններն Իրաքում, այլեւ շարունակել միջինարեւելյան քաղաքականության աստիճանական իրացումը: Բացի այդ, Իրաքի հետ Թուրքիայի հարաբերությունները կնպաստեն նաեւ Իրաքի վարչակարգի դիրքերի եւ միջազգային հեղինակության ամրապնդմանը: Անկարայի պատկերացմամբ՝ թուրք-իրաքյան հարաբերությունները կարող են դառնալ ռազմավարական համագործակցության նոր մոդել միջինարեւելյան մյուս երկրների համար: Այդ համագործակցության մեջ Թուրքիան ձգտում է ներգրավել նաեւ Սիրիային: Թուրքիա–Իրաք–Սիրիա համագործակցությունը, Ա.Դավութօղլուի համոզմամբ, Միջագետքը նորից կդարձնի «աշխարհի ամենաժաղկուն շրջաններից մեկը»: Անկարայում գիտակցում են, որ մոտ ապագայում Իրաքից ամերիկյան ուժերի դուրս գալուց հետո, Թուրքիան կարող է առավել գործունե ազդեցություն ունենալ միջինարեւելյան, այդ թվում՝ իրաքյան գործընթացներում: Արեւմտյան փորձագետները կարծում են, որ Իրաքից ԱՄՆ-ի դուրս գալուց հետո այդ երկիրը կհայտնվի Իրանի, ինչպես նաեւ Թուրքիայի ազդեցության դաշտում:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾ ԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ՍԵՆԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

2009-ի վերջին քաղաքական անկայունությունն իրանում նոր ցույցերի եւ բախումների հանգեցրեց: Դեկտեմբերի 16-ին, օգտվելով Աշուրայի (680թ. սպանված իմամ Յուսեյնի հիշատակի օրվա) կապակցությամբ անցկացվող զանգվածային միջոցառումներից, իրանական ընդդիմության կողմնակիցները դուրս եկան ցույցերի: Դեկտեմբերի 20-ին ներկայիս հոգեւոր իշխանություններին ընդդիմադիր այաթուլա Մոնթազերիի մահը եւ թաղման արարողությունն էլ ավելի ուժեղ լիցք հաղորդեցին ընդդիմության գործողություններին:

Հակակառավարական ցույցերի պատրաստվածությունը

Դեկտեմբերին եւ հունվարին տեղի ունեցած ցույցերը եւ բախումները ցույց տվեցին, որ իրանական ընդդիմության գործողությունները բավական լավ կազմակերպված էին: Առաջին հայացքից ինքնաբուխ թվացող բողոքները, որոնք անցնում էին իրանական գրեթե բոլոր մեծ քաղաքներում, անկասկած, կազմակերպված էին մեկ ընդհանուր կենտրոնից, ինչի վկայությունն էին միանման կարգախոսները, նույնաոճ քաղաքական պաստառները, տարբեր քաղաքներում ընթացող հակակառավարական գործողությունների նույնատիպ մեթոդները: Բացի այդ, ընդդիմությունը նախօրոք կարողացել էր ապահովել ապագա բողոքի, բախումների եւ զոհերի մասին տեղեկությունների անխափան մատակարարումն արեւմտյան առաջատար լրատվամիջոցներին, դրանց տարածումը համացանցում: Արդյունքում՝ ընդդիմությունը կարողացավ շրջանցել տեղեկատվական շրջափակումը, ինչը, ամենայն հավանականությամբ, տեղի ունեցավ ոչ առանց երրորդ կողմի օժանդակության:

Ինչ վերաբերում է իրանական իշխանություններին, ապա նրանք նույնպես պատրաստված էին հնարավոր ցույցերին եւ բախումներին: Հավանաբար անցած ամիսների ընթացքում կատարված ձերբակալությունները, կոշտ հարցաքննությունները, որոնք ուղեկցվում էին նաեւ մահվան դեպքերով, իրանական հատուկ ծառայությունների համար լավ տեղեկատվական բազա էին ստեղծել, ինչի արդյունքում ցույցերի սկսման

հենց հաջորդ օրը ոստիկանությունը եւ անվտանգության կառույցները սկսեցին իրականացնել ամենաակտիվ ընդդիմադիր երիտասարդ առաջնորդների ձերբակալություններ իրենց իսկ տներում՝ խուսափելով ավելի անհարմար փողոցային գործողություններից եւ ավելի մեծ քանակության զոհեր ունենալուց:

Դիտարկելով իրանական ընդդիմության գործելաոճը՝ կարելի է ենթադրել, որ այն ձեւավորվել էր հետեւյալ համոզմունքով. ցույցերը կարող են հաջողությամբ ավարտել եւ ստիպել իշխանություններին գնալ լուրջ քաղաքական զիջումների: Այսօրինակ ենթադրություն կարելի է անել այն փաստից, որ ընդդիմադիր առաջնորդներ Մ.Յ.Սուսավիին, Մ.Խաթամին եւ Մ.Քյարուբին ցույցերի առաջին իսկ օրից աջակցություն հայտնեցին ցուցարարներին, միացան նրանց, չնայած անցած ամիսներին ցուցաբերել էին ընդգծված զգույշ պահվածք: Ցույցերի կազմակերպմանն ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում նաեւ Սուսավիի եւ Քյարուբիի ազգականները: Առաջինի քրոջորդին բախումների ժամանակ զոհվեց: Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ անցած ամիսների ընթացքում Մ.Խաթամին եւ Մ.Քյարուբին այցելել էին իրանական շրջաններ՝ հավանաբար տեղի ակտիվ շրջանակներին գալիք ցույցերին նախապատրաստելու:

Ամենայն հավանականությամբ, ընդդիմության ղեկավարները համոզված էին, որ վերջին ամիսներին իրանում իրենց կատարած կազմակերպչական աշխատանքները, քարոզչությունը, իրանական բանտերում ընդդիմադիրների դեմ կիրառվող բռնությունները, որոնց փաստն արդեն իսկ ընդունվել է նաեւ իշխանությունների կողմից, հասարակական բողոքի խոշոր ալիք են բարձրացնելու:

Սակայն, չնայած սրան եւ իսկապես մեծաքանակ ցույցերին, հասարակական պոռթկում իսլամական հանրապետությունում տեղի չունեցավ: Մի կողմ թողնելով այն տեղեկատվական հնչեղությունը, որով միջազգային հանրությանը ներկայացվեց իրանական քաղաքական ճգնաժամի հերթական հանրահավաքային փուլը, իրանական ընդդիմության ծրագրերը, մեր համոզմամբ, տապալվեցին: Կարելի է սպասել, որ հերթական բողոքի խոշոր գործողություններ իրանական ընդդիմությունը կփորձի անցկացնել արդեն գարնանը, Նոուրուզի տոների ժամանակ եւ, հավանաբար, ամռանը, երբ կլրանա նախագահական ընտրությունների մեկ տարին: Այս գործողություններն անհրաժեշտ կլինեն պահպանելու ընդդիմադիր շարժումը մինչեւ 2011 եւ 2012թթ., երբ տեղի կունենան, համապատասխանաբար, ինքնակառավարման մարմինների եւ խորհրդարանի նոր ընտրությունները:

Իշխանության քայլերը

Իրանի իշխանությունները վերջին իրադարձությունների ընթացքում բավական սառնասիրտ կեցվածք ցուցաբերեցին: Բախումների օրերին Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեին ոչ մի հայտարարությամբ հանդես չեկավ:

Միայն հունվարի 10-ին Ղոմում ելույթի ժամանակ նա ներկայացավ կարեւոր հայտարարություններով, որոնցից հիմնականը երեքն էին.

1. ամեն ինչ կազմակերպված է դրսից,
2. իշխանությունը շարունակելու է նույն կերպ պատասխանել անօրինականություններին՝ կիրառելով բոլոր հնարավոր միջոցները,
3. ընդդիմության ոչ մի առաջարկ չի քննարկվելու, իսկ քաղաքական ճգնաժամը լուծվելու է իշխանության ընտրած ճանապարհով: Իսկ այդ ճանապարհը ենթադրում է «համաձայնություն ժողովրդի կամքի հետ, օրինապաշտություն եւ համակերպում սեփական պարտության հետ»:

Խամենեիի ելույթն ավելի քան վստահ էր: Հատկանշական է, որ Իրանի առաջնորդն ընդդիմության հիմնական ղեկավարների անուններն անգամ չհնչեցրեց՝ անպատասխան թողնելով նրանց՝ նախօրեին իրեն ուղարկված «երկխոսության եւ ճգնաժամի հաղթահարման առաջարկը», որը ենթադրում էր նոր նախագահական ընտրությունների կազմակերպման պահանջ: Մուսավիի առաջարկը սուր քննադատության արժանացավ միայն խորհրդարանի ղեկավար Ա.Լարիջանիի կողմից, որն այն բնորոշեց որպես «ակնհայտ քայլ, ինչը վկայում է քաղաքական երկխոսությունից խուսափելու եւ անպատասխանատվության մասին»: Իրանական լրատվամիջոցները ողջ գործընթացը ներկայացրին որպես արտաքին ուժերի կողմից կազմակերպված դավադրություն, իսկ բախումների ժամանակ զոհվածների մի մասին բնորոշեցին որպես «ահաբեկչական կազմակերպությունների մարտիկներ»:

Հունվարին Իրանի ներքաղաքական կյանքում տեղի ունեցավ շատ կարեւոր մեկ իրադարձություն եւս. ընթացող գործընթացներին մանրամասն անդրադարձ կատարեց եւ գնահատականներ տվեց Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) գլխավոր հրամանատար Մ.Ա. Ջաաֆարին:

Պետք է նշել, որ իրանա-իրաքյան պատերազմի ավարտից հետո Իրանի այն ժամանակվա նախագահ Ա.Ա.Հաշեմի-Ռաֆսանջանիի ջանքերով իրանական ընտրանին համաձայնության եկավ, որ ԻՀՊԿ-ն պետք է հեռու մնա ներքաղաքական գործընթացներից, առավել եւս՝ քաղաքական բնույթի հայտարարություններ չանի:

Մ.Ահմադինեժադի օրոք, որին շատերը համարում են ԻՅՊԿ շահերի ներկայացուցիչ, 80-ականների վերջին ստեղծված իրավիճակը սկսել է փոխվել: Եվ այս տարվա հունվարի 13-ին ԻՅՊԿ ղեկավարը հանդես եկավ զուտ ներքաղաքական բնույթի սուր ելույթով. «Տեղի ունեցող գործընթացների հիմնական նպատակն է թուլացնել հոգեւոր առաջնորդի դիրքերը եւ նրա իշխանությունը դարձնել զուտ արարողակարգային, ինչը հակասում է մեր երկրի իսլամական բնույթին /.../ Մեր թշնամիներն ուզում են այստեղ թավշյա հեղափոխություն կազմակերպել, ուզում են հարվածել իշխանությանը եւ առաջին հերթին մեր հոգեւոր առաջնորդին /.../, այն, որ մեր ընտրանու մի մասը հեռացել է հեղափոխության արժեքներից, նոր փաստ է: Բայց այսօր մեր թշնամիները կասկած եւ անվստահություն են սերմանում մեր ժողովրդի մեջ՝ օգտագործելով հենց այդ մարդկանց, որոնց նրանք իրենց տեղի եւ արտասահմանցի լրտեսների միջոցով նախօրոք ներքաշել են տնտեսական եւ քաղաքական դավադրությունների մեջ: /.../ Մ.Խաթամին նպատակադրվել էր տապալել Մ.Ահմադինեժադին, որպեսզի հարվածի Առաջնորդին: Դա չի ստացվի»:

Այն, որ ԻՅՊԿ-ն Իրանում կարեւորագույն դերակատարի է վերածվել, կարող է խոսել միայն այն մասին, որ իշխանությունն էլ ավելի է կենտրոնանում ծայրահեղական պահպանողականների ձեռքերում: Շարունակվող ձերբակալությունները, ահաբեկչությունները, հետապնդումները բերելու են միմիայն քաղաքական ուժի կենտրոնացման ուժային կառույցների ձեռքերում, որը պետք է օգտագործվի Իրանի քաղաքական կյանքի կարեւորագույն իրադարձության ժամանակ՝ նոր հոգեւոր առաջնորդի ընտրության օրը: Իրանի համար կարեւորագույն հարցն այսօր այն է, թե ով է Ա.Խամենեյից հետո դառնալու երկրի ղեկավարը:

Հարկ է նշել, որ վերջին իրադարձությունների ժամանակ Իրանի խորհրդարանի ընդդիմադիր պատգամավորներն ավելի համեստ հայտարարություններով հանդես եկան ընթացող գործընթացների եւ բախումների վերաբերյալ: Սա, հավանաբար, արդյունքն է այն բանի, որ իշխանություններն անցած ամիսների ընթացքում ակտիվ ճնշում են գործադրել քաղաքական ուժերի ներկայացուցիչների վրա: Մի քանի ընդդիմադիր գործիչների ձերբակալությունները զսպիչ ազդեցություն են ունեցել քաղաքական ուժերի վրա:

Գնահատելով քաղաքական իրավիճակն Իրանում՝ այն, առանց կասկածի, կարելի է շարունակել անվանել քաղաքական ճգնաժամ: Սակայն ղեկտեմբերին եւ հունվարին տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ փողոցային գործողությունները եւ զանգվածային բողոքները չեն կարող լուծել ներքին բարդ տարաձայնությունները:

ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԵՐ *Բենիամին Պողոսյան*

Ահաբեկչության դեմ պայքարի հայեցակարգը եւ նեոպահպանողականությունը

2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո Բուշ կրտսերի արտաքին քաղաքականության հիմքում դրվեց ահաբեկչության դեմ պայքարի գաղափարը: Արդեն 2001 սեպտեմբերի 20-ին, ելույթ ունենալով ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների համատեղ նիստում, Բուշը հայտարարեց, որ ԱՄՆ հատուկ ծառայությունների ստացած բոլոր տեղեկությունները վկայում են, որ ԱՄՆ-ի դեմ ահաբեկչական հարձակման թիկունքում կանգնած է «Ալ-Քաիդա» կազմակերպությունը: Սակայն ամերիկյան նախորդ վարչակազմը չբավարարվեց միայն «Ալ-Քաիդային» պատերազմ հայտարարելով: Նույն ելույթում Բուշը նշեց, որ ահաբեկչության դեմ պայքարը սկսվում է «Ալ-Քաիդայով», սակայն չի ավարտվում միայն այդ կազմակերպության դեմ իրականացվող գործողություններով: Արդեն 2002թ. հունվարին Կոնգրեսին ուղղված ամենամյա ուղերձում խոսելով ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտության մասին՝ ԱՄՆ նախագահը բազմաթիվ անգամներ հիշատակեց ՉԱՄԱՍ, «Հիզբալլահ» կազմակերպություններին, Յուսուսային Կորեային, Իրաքին եւ Իրանին՝ միայն հպանցիկ անդրադառնալով «Ալ-Քաիդայի» դեմ մղվող պայքարին:

Բուշի վարչակազմն ահաբեկչության դեմ պատերազմը համեմատում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ Սառը պատերազմի հետ՝ դրանով ամերիկյան հասարակությանը փորձելով համոզել այդ պատերազմին հատկացվող հսկայական միջոցների եւ դրա ընթացքում ամերիկյան կողմի կորուստների արդարացվածության մեջ: Ամերիկյան իշխանություններն ահաբեկչության դեմ մղվող պայքարի հայեցակարգն ակտիվորեն սկսեցին օգտագործել սեփական աշխարհաքաղաքական շահերի առաջնորդման նպատակով:

Այս քաղաքականության մշակման հիմքում ընկած էր նեոպահպանողական գաղափարախոսությունը, որի կողմնակիցները ազդեցիկ դիրքեր էին գրավում Բուշ կրտսերի վարչակազմում՝ վայելելով փոխնախագահ

Չեյնիի լիակատար աջակցությունը: Այս գաղափարախոսության հետևորդները գտնում էին, որ ժողովրդավարության արտահանումը եւ ԱՄՆ գլոբալ գերիշխանության պահպանումը լավագույն միջոցն են աշխարհում երկարաժամկետ խաղաղության ապահովման համար: Նեոպահպանողականները վերապահությամբ էին մոտենում միջազգային կազմակերպությունների արդյունավետությանը եւ դեմ էին արտահայտվում մեծ թվով դաշնակիցներ ունենալու գաղափարին: Ղեկավարվելով «ԱՄՆ առաջնորդությունը դրական է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ողջ աշխարհի համար» կարգախոսով, նեոպահպանողականները հանդես էին գալիս ԱՄՆ-ի կողմից ուժի միակողմանի օգտագործման օգտին: Միաժամանակ նրանք համոզված էին, որ ռազմական ուժը չափազանց օգտակար միջոց է ԱՄՆ-ի համար ձեռնտու աշխարհակարգ ձեւավորելու գործընթացում: Նեոպահպանողականները գտնում էին, որ եթե Միացյալ Նահանգները ցույց տա ռազմական ուժ կիրառելու իր պատրաստակամությունը, ապա նրա դաշնակիցները կընդունեն ԱՄՆ առաջնորդությունը, իսկ հակառակորդները հարկադրված կլինեն հնազանդվել ԱՄՆ կամքին:

Ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտության կարգախոսի ներքո 2001թ. աշնանը ներխուժելով Աֆղանստան եւ տապալելով թալիբների վարչակարգը՝ ԱՄՆ-ը ռազմական հենակետեր ձեռք բերեց Կենտրոնական Ասիայում, մասնավորապես Ուզբեկստանում եւ Ղրղըզստանում՝ դա հիմնավորելով Աֆղանստանում իրավիճակի կայունացման անհրաժեշտությամբ: Առաջնորդվելով «Ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է» սկզբունքով՝ Բուշի վարչակազմը կարողացավ սկզբնական շրջանում կանխել նաեւ Ռուսաստանի հակազդեցությունը Կենտրոնական Ասիայում ամերիկյան զինված ուժերի հաստատման փաստի դեմ, քանի որ ռուսական ցանկացած հակազդեցություն անմիջապես կմեկնաբանվեր որպես հրաժարում ահաբեկչության դեմ պայքարից, ինչը Ռուսաստանն իրեն թույլ տալ չէր կարող հատկապես Չեչնիայում ընթացող ռազմական գործողությունների պայմաններում:

Նեոպահպանողական ուղղության կողմնակիցները նախապատրաստեցին նաեւ ամերիկյան զորքերի ներխուժումը Իրաք, որն արդարացվեց պաշտոնական Բաղդադի կողմից զանգվածային ոչնչացման զենքերի պատրաստման, ինչպես նաեւ Սադամ Հուսեյնի՝ միջազգային ահաբեկչությանը ցուցաբերած ենթադրյալ աջակցության փաստով:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Իրաք ներխուժման նախօրյակին նեոպահպանողականները համոզված էին ԱՄՆ ռազմական ուժի

ամենագործողության մեջ: Նման տեսակետների հիմքում ընկած էր նախորդ տասնհինգ տարիների ընթացքում ԱՄՆ-ի կողմից նվազագույն կորուստներով իրականացված հաջող ռազմական գործողությունների փորձը՝ (1989թ.՝ Պանամա, 1991թ.՝ Ծոցի առաջին պատերազմ, 1995թ.՝ Բոսնիա եւ 1999թ.՝ Կոսովո): 2003թ. սկզբում Աֆղանստան ներխուժումը եւս որպես հաջողություն էր ընկալվում:

Բուշի վարչակազմը ժողովրդավարության արտահանմանը ձեռնամուխ եղավ նաեւ ոչ ռազմական միջոցներով՝ զգալի չափով ներգրավվելով 2003թ. Վրաստանում, 2004թ. Ուկրաինայում եւ 2005 թ. Լիբանանում տեղի ունեցած ներքաղաքական գործընթացներում, որոնց արդյունքում երեք երկրներում էլ իշխանության եկան ամերիկամետ ուժեր:

Սակայն արդեն Բուշ կրտսերի նախագահության երկրորդ շրջանում աստիճանաբար պարզ դարձավ, որ միաժամանակ բոլոր ուղղություններով պայքարը վեր է անգամ ԱՄՆ-ի պես գերտերության հնարավորություններից: Իրաքում իրավիճակն սկսեց վատթարանալ՝ հարկադրելով ամերիկյան իշխանություններին 2007թ. զգալի քանակությամբ նոր զորքեր ուղարկել Իրաք: 2005թ. մայիսին Ուզբեկստանում տեղի ունեցած իրադարձություններից եւ դրան հետեւած ԱՄՆ-ի եւ եվրոպական երկրների՝ պաշտոնական Տաշքենդին ուղղված խիստ քննադատությունից հետո փակվեց Ուզբեկստանում տեղակայված ամերիկյան ռազմակայանը, 2006թ. հունվարին Պաղեստինյան ինքնավարությունում անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքում հաղթանակ տարավ ՀԱՄԱՍ կազմակերպությունը, Աֆղանստանում թալիբներն աստիճանաբար սկսեցին վերականգնել իրենց ազդեցությունը: Փաստացի ձախողվեց 2006թ. ամռանը ԱՄՆ դաշնակից Իսրայելի կողմից «Հիզբալլահ» կազմակերպության դեմ Լիբանանում սանձազերծված պատերազմը, ռուս-ամերիկյան հարաբերությունների վատթարացումը կողմերին ընդհուպ մոտեցրեց Սառը պատերազմի վերսկսման եզրին, իսկ Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցման գործընթացի ԱՄՆ-ի կողմից արհեստական արագացման փորձերը նպաստեցին 2008թ. ռուս-վրացական պատերազմի բռնկմանը: Իրանում ռեժիմի փոփոխությանն ուղղված քաղաքականությունը որեւէ կոնկրետ արդյունքի չհանգեցրեց, ընդհակառակը, 2005թ. նախագահական ընտրությունների արդյունքում հաղթանակ տարավ արմատական ուժերի ներկայացուցիչ Մահմուդ Ահմադինեժադը, որն արտաքին քաղաքականության ոլորտում հանդես էր գալիս խիստ հակամերիկյան կարգախոսներով:

Ի հարկե, չի կարելի պնդել, որ ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Բուշ կրտսերի օրոք միայն ձախողումներ է ունեցել: 2001թ. սեպտեմբերի 11-ից ի վեր ԱՄՆ տարածքում ահաբեկչական գործողություններ չեն կատարվել, ի տարբերություն Եվրոպայի, որտեղ 2004թ. մարտին Մադրիդում եւ 2005թ. հուլիսին Լոնդոնում իրականացված ահաբեկչական գործողություններն իսկական շոկ էին եվրոպացիների համար: ԱՄՆ-ին հաջողվեց որոշակիորեն կայունացնել իրավիճակն Իրաքում եւ կանխել երկրի տրոհումը կամ հակաամերիկյան ուժերի կողմից իշխանության գավթումը: ԱՄՆ ակտիվ աջակցությամբ Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներ անդամակցեցին ՆԱՏՕ-ին, 2001–2008թթ. ընթացքում որոշակիորեն ավելացել է ԱՄՆ ազդեցությունը հետխորհրդային տարածաշրջանում:

Բարաք Օբամայի նոր մոտեցումները

2008թ. ԱՄՆ նախագահական ընտրապայքարում դեմոկրատական կուսակցության թեկնածու Բարաք Օբամայի հիմնական կարգախոսը փոփոխության կոչն էր թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականությունում: 2008թ. նոյեմբերի ընտրություններում զգալի առավելության հասնելով հանրապետական կուսակցության թեկնածու Ջոն Մաքքեյնի նկատմամբ՝ Օբաման ձեռնամուխ եղավ նախընտրական խոստումների իրականացմանը: ԱՄՆ նոր վարչակազմը հայտարարեց Ռուսաստանի հետ հարաբերությունները վերագործարկելու, Իրանի հետ ուղիղ երկխոսություն սկսելու, մինչեւ 2011թ. ավարտը Իրաքից ամերիկյան զորքերը դուրս բերելու եւ մահմեդական աշխարհի հետ հարաբերությունները կարգավորելու մտադրության մասին:

Ջզալի փոփոխություններ կրեց նաեւ ԱՄՆ հակաահաբեկչական պայքարի հայեցակարգը: Օբաման ահաբեկչության դեմ պայքարի հիմնական թիրախ հայտարարեց «Ալ-Քաիդան»՝ հրաժարվելով բազմաթիվ հակառակորդների դեմ միաժամանակ պայքար մղելու քաղաքականությունից: Օբամայի վարչակազմի ներկայացուցիչները նշում են, որ ԱՄՆ-ը չպետք է պայքար մղի ահաբեկչական բոլոր շարժումների եւ նրանց աջակցող պետությունների դեմ, քանի որ դրանց մեծ մասի գործունեությունն ուղղված չէ ԱՄՆ շահերի դեմ: Անհրաժեշտ է ջանքերը կենտրոնացնել սեպտեմբերի 11-ի ահաբեկչության հետեւում կանգնած «Ալ-Քաիդային» պարտության մատնելու խնդրի վրա, այլ ոչ թե երկրագնդի տարբեր մասերում պատերազմ մղել «ահաբեկչություն» անունով անորոշ թշնամու դեմ: Օբամայի վարչակազմն աստիճանաբար հրաժարվում է

«պատերազմ ահաբեկչության դեմ» արտահայտության օգտագործումից: Նույնիսկ Աֆղանստան հավելյալ 30.000 ամերիկյան զինվորներ ուղարկելու Օբամայի որոշումը բացատրվում է ոչ թե «Թալիբան» շարժումը ջախջախելու մտադրությամբ, այլ 2008–2009թթ. ընթացքում արձանագրված վերջիններիս առաջխաղացումը հետ մղելու նպատակ է հետապնդում: Այս քաղաքականության նպատակն է ազդեցության ավելի մեծ լծակներ ձեռք բերել թալիբների նկատմամբ եւ հետագա բանակցությունների ընթացքում դրանք օգտագործելով՝ ստիպել թալիբներին հրաժարվել «Ալ-Քաիդայի» հետ համագործակցելուց:

Ի տարբերություն Բուշ կրտսերի, որի օրոք ԱՄՆ-ը տարբերություն չէր տեսնում ահաբեկիչների եւ նրանց ապաստան տվողների միջեւ, Օբամայի վարչակազմը հստակ տարբերակում է «Թալիբան» շարժմանը «Ալ-Քաիդայից»: Օբամայի մի շարք խորհրդականներ նշում են, որ «Թալիբանն» ազգային շարժում է, եւ չնայած ահաբեկում է Աֆղանստանի բնակչության աշխարհիկ կողմնորոշում ունեցող հատվածին, այն առանձնապես հակված չէ ահաբեկչական գործողություններ իրականացնել ԱՄՆ-ի դեմ: Որոշակիորեն փոխվել է վերաբերմունքը նաեւ ՀԱՄԱՍ եւ «Հիզբալլահ» կազմակերպությունների նկատմամբ: Բուշ կրտսերի համար այդ երկու կազմակերպությունների եւ «Ալ-Քաիդայի» միջեւ միակ տարբերությունն այն էր, որ առաջին երկուսն ահաբեկչական գործողություններ էին իրականացնում Իսրայելի նկատմամբ, իսկ քանի որ վերջինս ԱՄՆ սերտ դաշնակիցն էր, դա բավարար հիմք էր այդ երեք կազմակերպությունների հանդեպ միանման քաղաքականություն իրականացնելու համար: Օբամայի վարչակազմի ներկայացուցիչները նշում են, որ թե՛ ՀԱՄԱՍ-ը եւ թե՛ «Հիզբալլահը» ազգային շարժումներ են եւ խոր արմատներ ունեն սեփական հասարակություններում: Այդ կազմակերպությունները հնարավոր չէ պարզապես ոչնչացնել, անհրաժեշտ է պայմաններ ստեղծել ռազմականացված կազմակերպություններից դեպի քաղաքական կազմակերպություններ վերջիններիս աստիճանական վերափոխման համար՝ այս գործընթացում օգտագործելով Իռլանդական հանրապետական բանակի փորձը:

Հարկ է ընդգծել, որ Օբաման չի հրաժարվում ահաբեկչության դեմ պայքարից, պարզապես նա սահմանափակում է այդ պայքարի ծավալները, որպեսզի դրանք համապատասխանեն ԱՄՆ ներկա կարողություններին եւ հնարավորություն տան ուշադրություն դարձնել ամերիկյան իշխանությունների առջեւ ծառայած այլ հիմնախնդիրներին: Օբամայի այս քաղաքականությունը բխում է նաեւ ԱՄՆ-ում ստեղծված օբյեկտիվ

իրավիճակից: Ֆինանսական ծանր ճգնաժամը, առողջապահության համակարգի շարունակվող վատթարացումը ամերիկյան նոր վարչակազմից զգալի ռեսուրսներ են պահանջում: Պատահական չէ, որ նախագահի պաշտոնի ստանձնումից հետո ունեցած ելույթներում Օբաման առողջապահությունն եւ տնտեսությունն բառերը երկու անգամ ավելի շատ է արտասանել, քան ահաբեկչություն, Իրաք, Իրան եւ Աֆղանստան բառերը միասին վերցրած:

Իրանի խնդրում Օբաման հայտարարեց առկա բոլոր խնդիրները ուղղակի երկխոսության ճանապարհով կարգավորելու պատրաստակամության մասին՝ հրաժարվելով Իրանում վարչակարգի փոփոխության հասնելու քաղաքականությունից: Չնայած հանրապետական կուսակցության պահանջներին՝ Օբաման Իրանի հետ երկխոսություն սկսելու առաջարկից չհրաժարվեց նաեւ 2009թ. հունիսին այդ երկրում կայացած նախագահական ընտրություններին հաջորդած բողոքի զանգվածային գործողություններից հետո: 2009թ. հոկտեմբերին Իրանի միջուկային ծրագրի խնդրով ժնեւում կայացած 5+1 ձեւաչափը ներկայացնող երկրների եւ Իրանի ներկայացուցիչների միջեւ բանակցությունների ընթացքում ուղղակի շփումներ կայացան ԱՄՆ-ի եւ Իրանի բարձրաստիճան ներկայացուցիչների միջեւ:

Օբամայի քաղաքականությունը գնահատելիս կարելի է զուգահեռներ անցկացնել ԱՄՆ մեկ այլ նախագահ Նիքսոնի վարած քաղաքականության հետ: Նախքան Նիքսոնի իշխանության գալը ԱՄՆ-ը շուրջ երկու տասնամյակ վարում էր կոմունիզմի զսպման քաղաքականություն՝ այդ տերմինի մեջ ընդգրկելով ամենատարբեր շարժումներ եւ վարչակարգեր: Սակայն Վիետնամի պատերազմը ցույց տվեց այդ քաղաքականության սնանկությունը: ԱՄՆ-ը պարզապես չուներ անհրաժեշտ միջոցներ երկրագնդի տարբեր մասերում կոմունիստական շարժումների իշխանության գալը կանխելու համար: Ուստի, Նիքսոնը հրաժարվեց «զսպման» քաղաքականությունից եւ բոլոր կոմունիստներին նույն ձեւով վերաբերելու դիրքորոշումից: Նա սկսեց հարաբերությունների կարգավորման գործընթաց կոմունիստական Չինաստանի հետ, քանի որ վերջինիս հետ հարաբերությունների նորմալացումը հավելյալ լծակներ էր տալիս ԱՄՆ-ին՝ ԽՍՀՄ-ի հետ շփումներում: Մոտավորապես նույն տրամաբանության շրջանակներում էլ Օբաման փորձում է տարանջատել «Թալիբան» շարժումն «Ալ-Քաիդայից»՝ վերջինիս մեկուսացնելու նպատակով:

Գնահատականներ եւ հնարավոր զարգացումներ

Առայժմ դժվար է միանշանակ գնահատական տալ Օբամայի արտաքին քաղաքական գործունեությանը: Այստեղ առկա են ինչպես որոշակի ձեռքբերումներ, այնպես էլ անհաջողություններ:

Ռուսաստանի հետ հարաբերություններում առկա է լարվածության որոշակի մեղմացում՝ հիմնականում պայմանավորված Լեհաստանում եւ Չեխիայում հակահրթիռային պաշտպանության նոր համակարգ տեղայակելու ծրագրից Օբամայի վարչակազմի հրաժարվելու հետ: Սակայն կողմերի միջեւ տարածայնությունները պահպանվում են հետխորհրդային տարածաշրջանում ազդեցության գոտիների հաստատման խնդրում: Բացի այդ, չնայած ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը հայտարարել էին մինչեւ 2009թ. դեկտեմբերի 5-ը Ռազմավարական սպառազինությունների կրճատման նոր պայմանագրի ստորագրման մտադրության մասին, կողմերին առայժմ չի հաջողվել լուծել այդ խնդրի վերաբերյալ առկա տարածայնությունները:

Որոշակի անորոշություն կա նաեւ Իրանի հետ հարաբերություններում: Իրանական ուրանի հարստացումը Ռուսաստանի եւ Ֆրանսիայի տարածքում իրականացնելու առաջարկի՝ պաշտոնական թեիրանի փաստացի մերժումից հետո ԱՄՆ–Իրան հարաբերությունների կարգավորման հեռանկարը բավական մշուշոտ է:

Առայժմ կոնկրետ արդյունքներ չկան նաեւ Աֆղանստանում «Թալիբան» շարժման եւ «Ալ-Քաիդայի» միջեւ համագործակցությանը վերջ տալու եւ «Ալ-Քաիդային» մեկուսացնելու գործընթացում:

Օբաման հաջողություններ չի գրանցել նաեւ արաբա-իսրայելական բանակցությունների վերսկսման ուղղությամբ: Իսրայելական նոր բնակավայրերի շինարարությունը դադարեցնելու ամերիկյան պահանջին ի պատասխան՝ պաշտոնական թել Ավիվը հայտարարեց միայն Արեւմտյան ափում բնակավայրերի շինարարության ժամանակավոր դադարեցման մասին, ինչը պաղեստինյան կողմը բավարար չի համարում բանակցությունների վերսկսման համար:

Միաժամանակ որոշակի լարվածություն է առաջ եկել ԱՄՆ–Իսրայել հարաբերություններում, ինչի անուղղակի հետեւանքներից մեկը ԱՄՆ հրեական ազդեցության տակ գտնվող վերլուծական կենտրոնների եւ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներում Օբամայի արտաքին քաղաքականության հանդեպ հնչող քննադատության աճն է:

Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ առնվազն առաջիկա երկու տարիների ընթացքում Օբաման կշարունակի ներկա արտաքին քաղաքական կուրսի իրականացումը, սակայն հստակ հաջողությունների բացակայության պայմաններում 2012թ. սկզբին հնարավոր է վերադարձ ավելի կոշտ արտաքին քաղաքականությանը, որը պայմանավորված կլինի նաեւ 2012թ. նախագահական ընտրություններում արտաքին քաղաքական հարցերում արմատական դիրքորոշում ունեցող ընտրողների ձայները շահելու խնդրով:

ԱՖՂԱՆՍՏԱՆ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՀՄՏԱԿԵՑՈՒՄ

Գազիկ Տերտերյան

Աֆղանստանում ընթացող զարգացումներն այսօր զգալի չափով պայմանավորում են գլոբալ քաղաքականության տրամաբանությունը: Այնպես որ, զարմանալի չէ, որ նախորդ տարվա դեկտեմբերի 1-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի՝ աֆղանական խնդիրներին նվիրված ելույթը Վեստ Փոյնթի ռազմական ակադեմիայում վերլուծաբանների և լրագրողների մեծ ուշադրությանն արժանացավ: Օբամայի ելույթի առանցքային դրույթները հետեւյալներն էին.

❖ Հայտարարվեց Աֆղանստանից ամերիկյան զորքերի դուրսբերման ժամկետը. ենթադրվում է այդ գործընթացը սկսել 2011-ի հուլիսից:

❖ Միեւնույն ժամանակ, մինչեւ զորքերի դուրսբերումը ենթադրվում է ջախջախել «Ալ-Քաիդայի» զինյալներին և այդպիսով թույլ չտալ ահաբեկիչներին սպառնալ ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին. այդ նպատակով նախագահ Օբաման Աֆղանստան լրացուցիչ 30 հազար զինծառայող ուղարկելու և թալիբներին ինքնուրույն դիմակայելու համար աֆղանական զինված ուժերը զորեղացնելու միջոցառումների մասին հրաման ստորագրեց:

❖ Զորքերի դուրսբերմանը զուգահեռ, ենթադրվում է իշխանության բոլոր լծակները հանձնել աֆղանական իշխանություններին և իրավիճակը հանդարտեցնելու նպատակով սկսել բանակցություններ այսպես կոչված «չափավոր թալիբների» հետ:

❖ Հատուկ շեշտվել են Պակիստանի կարեւորությունը և այդ երկրի հետ շարունակական «աշխատանքներ վարելու» անհրաժեշտությունը:

Մեկնաբանները նշում են, որ ԱՄՆ նախագահի աֆղանական «ճանապարհային քարտեզը» էությամբ շատ նման է Իրաքից ամերիկյան զինուժի դուրսբերման ծրագրին: Միեւնույն ժամանակ, զինուժի դուրսբերման ժամկետների ամրագրումը որոշակի հավաստիացումն է այն բանի, որ ամերիկյան «լիցքաթափման» նոր քաղաքականությունը շարունակվում է, և այդ առումով ելույթը որոշակի քարոզչական նպատակներ էր հետապնդում:

Քարոզչական տարրեր. Հատկանշական է, որ խոսելով 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչության եւ Աֆղանստանում ընթացող պատերազմի պատճառների ու մեղավորների մասին, Միացյալ Նահանգների նախագահը վերջիններիս շարքում, «Ալ-Քաիդայի» եւ «Թալիբանի» հետ միասին, նշեց նաեւ ԽՍՀՄ-ը: Ըստ Օբամայի, «Ալ-Քաիդան» իշխանության եկավ Աֆղանստանում 1979–1989թթ. ԽՍՀՄ վարած պատերազմի արդյունքում: Մինչդեռ հայտնի է, որ «Ալ-Քաիդան» եւ Ուսամա Բեն-Լադենը «ստեղծվել» են ամերիկյան եւ պակիստանյան հատուկ ծառայությունների կողմից՝ խորհրդային բանակի դեմ վարվող պատերազմի (1979–1989թթ.) վերջին փուլում, երբ այդ բանակի դուրսբերումը Աֆղանստանից արդեն կասկած չէր հարուցում: Նախագահի անդրադարձը ԽՍՀՄ-ին, թերեւս, պայմանավորված էր այն հանգամանքով, որ ներկայումս ՋԼՄ-ում հաճախ կարելի է հանդիպել համեմատությունների ԽՍՀՄ եւ ԱՄՆ աֆղանական պատերազմների միջեւ: Սասնավորապես, որոշ մեկնաբաններ իրենց հրապարակումներում ներկայացնում են արեւմտյան սոցիոլոգիական կենտրոնների հարցումների տվյալները, համաձայն որոնց՝ Աֆղանստանի «սովետամետ» նախագահ Նաջիբուլային աֆղանների մեծ մասը համարում է 20-րդ դարի իրենց լավագույն ղեկավար: Դա այնքան էլ տարօրինակ չէ, եթե հաշվի առնենք, որ «սովետները», բացի դաժան ռազմական գործողություններից, այդ երկրում իրագործում էին նաեւ լայնածավալ տնտեսական ու կրթական ծրագրեր, եւ այդ առումով զուգահեռները ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի միջև միշտ չէ, որ հոգուտ վերջինի են: Սակայն երկու դեպքում էլ անհրաժեշտ է արձանագրել, որ գերտերություններն այդ յուրահատուկ երկրում հանդիպում են զարմանալի ուժեղ դիմադրության:

Իրադրությունը Աֆղանստանում. Իր ելույթում ԱՄՆ նախագահը Աֆղանստանում տիրող իրավիճակը ներկայացրեց որպես բավական ծանր. աֆղանական զինյալները գերակայում են երկրի 34 գավառներից 11-ում, եւ զուտ ռազմական առումով զարգացումները խիստ մտահոգիչ են ԱՄՆ-ՆԱՏՕ զինված ուժերի համար: Հատկանշական է, որ Օբաման շեշտեց, որ չնայած բացասական միտումներին, Աֆղանստանը դեռեւս չի կարելի կորսված համարել Միացյալ Նահանգների համար, ինչը բնութագրում է խնդրի վերաբերյալ ամերիկյան պատկերացումները:

Հոռետեսական են նաեւ հատուկ ծառայությունների կանխատեսումները: Համաձայն Աֆղանստանում ԿՀՎ ռեզիդենտուրայի նախկին ղեկավար եւ Հետախուզության ազգային խորհրդի նախագահի նախկին տեղակալ Գրեմ Ֆուլերի, ռազմական գերակայության հասնելու եւ հետո

«փափուկ» Աֆղանստանից դուրս գալու Օբամայի ծրագրերը գրեթե անիրագործելի են, եւ ուղարկվող նոր զորամիավորումներն ընդամենը «պաշտպանելու են արդեն այնտեղ գտնվող զորամիավորումներին»:
«Քաղաքական իսլամի ապագան» գրքի հեղինակ Ֆուլերը, որը տարածաշրջանի գիտականերից է, համոզված է, որ ոչ մի կերպ չի կարելի համոզել փուշտուններին, «որ ամերիկացիները բարեկամներ են, իսկ թալիբանը՝ թշնամի»:

ԱՄՆ եւ ՆԱՏՕ զինվորական համակազմի նոր գլխավոր հրամանատար, գեներալ Մաք Քրիստալը ստեղծված իրավիճակը նույնպես գնահատում է խիստ ծանր եւ դրուօթյունը շտկելու համար լրացուցիչ մինչեւ 80 հազար զինծառայող է պահանջում. արդյունքում՝ որոշում կայացվեց Աֆղանստան ուղարկել 30 հազար զինծառայող: Սակայն հաշվի առնելով, որ այդ երկրում արդեն մոտ 70 հազար զինծառայող կա, իսկ աֆղանական ազգային բանակի թվաքանակը շուրջ 100 հազար է, պետք է փաստել, որ աֆղան զինյալների դեմ ռազմական գործողություններին մասնակցողների թիվն արդեն ավելին է, քան 1979–1989թթ. պատերազմում:

Ի լրումն ռազմական խնդիրների, խիստ մտահոգիչ է նաեւ այդ երկրում տիրող քաղաքական իրավիճակը: Համաձայն տեղեկատվական աղբյուրների՝ նախագահ Համիդ Քարզայը, «վերընտրվելով» եւ ամրապնդելով իր դիրքերը, սկսել է ավելի ինքնուրույն պահելաձեւ ցուցաբերել: Նա իր ելույթներում արտահայտում է այն միտքը, թե միայն ռազմական ճանապարհով անհնարին է հաջողության հասնել ու փորձում է ավելի իրատեսական քաղաքականություն վարել: Մասնավորապես, 2009թ. դեկտեմբերի 3-ին AP գործակալությանը տված հարցազրույցում Քարզայը մտադրություն է հայտնել՝ ընդհանուր եզրեր գտնել «Թալիբան» շարժման հոգեւոր առաջնորդ, մուլլա Մոհամեդ Օմարի հետ:

Ինչպես նշել ենք, նման քաղաքականությունն այսօր ընդունվում է Վաշինգտոնում, սակայն տպավորությունն այնպիսին է, թե ամերիկյան վարչակազմը դեմ է, որ նմանօրինակ գործընթացները կատարվեն առանց իր անմիջական վերահսկման: Արդյունքում՝ Քարզայի նկատմամբ սկսել են կիրառվել ամերիկյան ավանդական «զսպման» տեխնոլոգիաները. ամերիկյան հեղինակավոր հրատարակություններում այսօր հաճախ կարելի է հանդիպել նյութերի, որոնցում նախագահ Քարզայը եւ նրա բարձրաստիճան եղբայրը մեղադրվում են թմրանյութերի առետրի եւ տարաբնույթ կոռուպցիոն գործողությունների մասնակցելու մեջ, կասկածի տակ են առնվում նաեւ նախագահական ընտրությունների արդյունքները:

Միեւնույն ժամանակ, ստեղծված իրադրությունում Միացյալ Նահանգներից դժգոհությունները խմորվում են ոչ միայն Աֆղանստանում, այլև սեփական երկրում:

Տրամադրություններն ԱՄՆ-ում. Համաձայն սոցիալոգումների՝ այսօր ամերիկացիների 51%-ը գտնում է, որ նպատակահարմար չէ աֆղանական պատերազմի վրա այնքան մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ ծախսել, որքան արվում է: Մոտ 42%-ը դեմ է, որ Աֆղանստան նոր զորամիավորումներ ուղարկվեն, եւ ընդամենը 26%-ն է համաձայն մնան որոշմանը:

Նկատենք, որ հռետեսական տրամադրությունների ձեւավորմանը նպաստում է ԱՄՆ հետճգնաժամային (խիստ հարաբերական իմաստով) տնտեսական իրավիճակը: Բավական է նշել, որ ԱՄՆ բյուջեի դեֆիցիտը 2009-ին կազմել է \$1.4 տրիլիոն, իսկ պետական պարտքը հասել է գրեթե ֆանտաստիկ մակարդակի՝ \$12 տրիլիոնի: Ավելացնենք, որ Պենտագոնի 2010թ. բյուջեն կազմում է \$636 մլրդ, իսկ Աֆղանստան նշված 30 հազար զինծառայողներ ուղարկելը հարկատուների վրա լրացուցիչ \$3 մլրդ կնստի:

Ստեղծված իրավիճակում աֆղանական պատերազմը ֆինանսավորելու համար ամերիկյան որոշ օրենսդիրներ առաջարկում են հարկերն ավելացնել 1%-ով: Նման նախագծերն ամերիկյան հանրությունում, բնականաբար, խանդավառություն չեն առաջացնում: Դրան զուգահեռ, մի շարք փորձագետներ ապացուցում են, որ եղած միջոցներն էլ միշտ չէ, որ օպտիմալ են ծախսվում. տեղեկատվական դաշտում հայտնվում են փաստեր, որ Աֆղանստան առաքվող հումանիտար օգնության մի զգալի մասը յուրացնում են հենց թալիբները: Ընդհանրական ռեսուրսների սղությունն ինչ-որ չափով փոխհատուցելու նպատակով ամերիկյան վարչակազմն այսօր փորձում է «միջազգայնացնել» հիմնախնդիրը:

Խնդրի միջազգայնացումը. Լրատվական գործակալությունները նշում են, որ նախագահ Օբաման ելույթին նախորդող օրերին հեռախոսազրույցներ է ունեցել բրիտանական, ֆրանսիական եւ ռուսաստանյան գործընկերների հետ: ԱՄՆ-ը ձգտում է Աֆղանստանում ստեղծված իրադրությունը ներկայացնել որպես միջազգային հանրության հիմնախնդիր եւ փորձում է ռազմաքաղաքական գործընթացներում լրացուցիչ ներգրավել այլ երկրների: Միեւնույն ժամանակ, Աֆղանստանում տիրող իրավիճակը, իրոք, դարձել է տարածաշրջանային երկրների մտահոգության առարկա, իսկ այնտեղից ամերիկացիների դուրս գալու հեռանկարը

միայն սաստկացնում է այդ մտահոգությունները: Սակայն այդ երկրներից յուրաքանչյուրը յուրովի է արձագանքում հիմնախնդրին:

Չինացիները, որոնք Հարավային Ասիան դիտարկում են որպես իրենց «ազգային շահերի տարածք», հետեւողականորեն ուժեղացնում են իրենց ներկայությունն Աֆղանստանում: «Չինաստանի մետալուրգիական խումբ» ընկերությունն այսօր իրագործում է Քաբուլից ոչ հեռու գտնվող Այնակի պղնձահանքային համալիրի մշակման եւ շահագործման աշխատանքները: Դրանց նախահաշիվը կազմում է \$3.4 մլրդ, այն այսօր Աֆղանստանում իրագործվող ամենախոշոր ներդրումային ծրագիրն է: Վաշինգտոնի Միջին Ասիայի եւ Կովկասի ինստիտուտի տնօրեն Ֆրեդերիկ Սթարի կարծիքով՝ «ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն համատեղ կատարել են նախապատրաստական աշխատանք, որպեսզի Չինաստանը տնտեսապես նվաճի Աֆղանստանը»: Ավելացնենք, որ դատելով ՁԼՄ-ում հայտնված նյութերից՝ Չինաստանի պլանները չեն սահմանափակվում զուտ տնտեսական հարցերով:

Որոշակի քայլեր է կատարում նաեւ Հնդկաստանը. բացի «փափուկ» ռազմավարությունից (Քաբուլում պառլամենտի շենքի կառուցում, մշակութային կապերի ձեւավորում եւ այլն), Դելիում հնչում են նաեւ առաջարկներ Աֆղանստանի հյուսիսային եւ արեւմտյան սահմանների պաշտպանությունն ուժեղացնելու վերաբերյալ: Ակնհայտ է, որ հիմնական մտահոգությունը ծայրահեղ իսլամական միավորումներից պաշտպանվելն է: Հավանաբար, նման մտահոգություններ պետք է ունենա նաեւ Ռուսաստանը, որն օգտագործելով իր, թերեւս, մասամբ պահպանված հնարավորություններն Աֆղանստանում, պետք է որ փորձի բուֆերային գոտիներ ձեւավորել միջինասիական հանրապետությունների սահմանամերձ գոտիներում:

Այս ամենը վկայում է այն մասին, որ կարծես թե առկա է աֆղանական հիմնախնդիրը գլոբալ հարթությունից դուրս բերելու եւ տարածաշրջանային խնդրի վերածելու միտում: Եթե այդ միտումը նյութականացվի եւ տարածաշրջանի երկրները սկսեն վճռական դերակատարում ցուցաբերել հիմնախնդրի լուծման գործում, ապա դա կլինի, թերեւս, այն միակ հնարավորությունը, որը թույլ կտա ինչ-որ չափով կարգավորել Աֆղանստանում եւ նրա շուրջ տիրող քաոսիկ եւ պայթյունավտանգ իրադրությունը:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԾԱՎԱԼՈՒԽՆ ԾԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ Սուրեն Մանուկյան

Ներկա գլոբալ ճգնաժամի եւ Իրաքում ու Աֆղանստանում անվերջ պատերազմների պայմաններում ԱՄՆ-ը, թվում է, պատրաստ է առժամանակ կիսել աշխարհի կառավարման ծանր գործը մեկ այլ տերության հետ: Դրա վկայությունը դարձավ 2009թ. նոյեմբերին ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի ելույթը Չինաստանում: «ԱՄՆ-ի եւ Չինաստանի միջեւ հարաբերությունները բնորոշելու են XXI դարը: Դա պատասխանատվություն է, որը մենք պետք է միասին կրենք»: Օբաման առաջարկեց նոր մակարդակի վրա դնել ԱՄՆ–Չինաստան համագործակցությունը միջազգային անվտանգության բնագավառում եւ փաստորեն ընդգծեց ԱՄՆ–Չինաստան ռազմավարական դաշինքի հնարավորությունը: Սա համընկնում է 2009թ. սկզբին ամերիկյան երկու խոշորագույն քաղաքագետներ Զ.Բժեզինսկու եւ Դ.Քիսինջերի առաջարկած «մեծ երկիշխանության» դոկտրինի հետ, ըստ որի հարկ է ոչ թե մրցակցել Չինաստանի հետ՝ գերտերության կարգավիճակի համար, այլ Պեկինին դաշնակից դարձնելով՝ կիսել նրա հետ աշխարհի կառավարման պատասխանատվությունը:

Չինաստանը, կարելի է ասել, ընդունել է առաջարկը եւ վստահությամբ շարժվում է դեպի համաշխարհային տիրապետություն:

«Կենսական տարածքների» ընդարձակում

Այսօր Չինաստանում հսկայական ժողովրդականություն է վայելում 2009թ. տպագրված «Չինաստանը բարկանում է» գիրքը: Այն մոտ 40 տարեկան հինգ հեղինակների՝ բլոգեր Վան Սյաոդունի, ռազմական փորձագետ Սուն Սյաոցզումի, հեռուստահաղորդավար Սուն Ցզյանի, լրագրող Լյու Յանի եւ դրամատուրգ Խուան Ցզիսուի էսսեների ժողովածու է, որը, կարելի է ասել, չինական ազգայնականության յուրահատուկ հրովարտակ է: Հեղինակները կոչ են անում վերհիշել Չինաստանի փառահեղ արմատները եւ նորից վերանվաճել արժանի տեղն աշխարհում: «Նայելով մարդկային քաղաքակրթության պատմությանը՝ պարզ է դառնում, որ մենք աշխարհի առաջնորդների ամենահարմար թեկնածուներն ենք». սա է գրքի հիմնական միտքը: Նպատակին հասնելու հիմնական

խոչընդոտը Արեւմուտքն է, որի դավերին անհրաժեշտ է համարժեք պատասխան տալ եւ ընդարձակել Չինաստանի «կենսական տարածքները»:

Սեփական քաղաքացիներին սփռելով աշխարհով մեկ՝ Չինաստանն օգտագործում է չինական համայնքներն իր գլոբալ ազդեցության ընդարձակման համար: Սա է չինական էքսպանսիայի հիմնական գործիքը:

Ընդարձակման համար ամենահարմար տարբերակը Ռուսաստանի նոսր բնակեցված Յեռավոր Արեւելքն ու Արեւելյան Սիբիրն են, ուր կարելի է դուրս բերել Չինաստանի բնակչության «ավելցուկը»: Պաշտոնական տվյալներով՝ Ռուսաստանի Յեռավոր Արեւելքում չինական աշխատանքային միգրանտների թիվը մոտ 200 հազար է: Սակայն փորձագետների կարծիքով, անօրինական ճանապարհով այստեղ հաստատված չինացիների թիվը հինգ անգամ ավելին է: Պեկինի հիմնական խնդիրը ռուսական իշխանությունների սահմանափակումները հաղթահարելն է: Ռուսաստանը կարելու է Պեկինի համար նաեւ որպես վառելիքի այլընտրանքային մատակարարող: Արեւելյան Սիբիր-Խաղաղ օվկիանոս մի հատվածի միացումը Չինաստանին որոշակիորեն թուլացնում է ՉԺՀ կախվածությունը Մերձավոր Արեւելքի եւ Աֆրիկայի խոցելի ծովային ուղիներից: Ընդ որում, այս նախագծի ավելի աշխարհաքաղաքական, քան տնտեսական բնույթի մասին է վկայում այն ցածր տոկոսադրույքը, որով Չինաստանի զարգացման բանկը 20 միլիարդ վարկ է տրամադրել ռուսական «Ռոսնեֆտ» եւ «Տրանսնեֆտ» ընկերություններին:

Կենսական այլ տարածքների ձեռքբերման առումով՝ 2009թ. բարեբեր եղավ Չինաստանի համար: Ճգնաժամի պատճառով ամբողջ աշխարհում ակտիվների էժանացումը եւ «կենդանի փողի» պակասը ընդարձակման նոր հնարավորություն էին տալիս համաշխարհային ճգնաժամի պարագայում տնտեսական աճ արձանագրող Չինական կայսրությանը: Հիմնական ուշադրությունը կենտրոնացվեց Լատինական Ամերիկայի, Մերձավոր Արեւելքի եւ Աֆրիկայի վրա:

Աֆրիկայի «նվաճումը»

Աֆրիկայում չինական ներկայությունն ուժեղացավ 1990-ականներից: Այս շրջանում հիմնական ռազմավարական նպատակն էր օգտակար հանածոների հասանելիության ապահովումը: Ռեսուրսներով հարուստ բռնապետություններին առանց որեւէ քաղաքական նախապայմանների վարկերի տրամադրումը եւ զենքի մատակարարումը թույլ տվեց Պեկինին բարիդրացիական հարաբերություններ հաստատել այն երկրների հետ,

որոնց Արեւմուտքը մեկուսացրել էր: ՉԺՅ պետական ձեռնարկությունները բացառիկ իրավունք էին ստանում ածխաջրածիններ եւ այլ օգտակար հանածոներ արդյունահանելու համար այնտեղ, որտեղ արեւմտյան ընկերությունների մուտքը փակ էր: Արդյունքում՝ Աֆրիկյան այսօր ապահովում է Չինաստանի նավթի ներմուծման մեկ երրորդը, շնորհիվ չինական պետական նավթային հսկաներ Sinopec-ի եւ CNPC-ի պայմանագրերի Անգոլայում, Սուդանում եւ Նիգերիայում:

Վերջին տարիներին Չինաստանն աստիճանաբար փոխում է Աֆրիկյան ներթափանցման մարտավարությունը: Առանց որեւէ պայմանի տրամադրվող արտոնյալ վարկերին փոխարինում են ենթակառուցվածքի շինարարությանն ուղղված հասցեական վարկերը: Այս համագործակցության նոր ձևաչափը ձեռնտու է բոլոր մասնակիցներին. աֆրիկյան կառավարությունները նորակառույց ճանապարհները, դպրոցները եւ հիվանդանոցները ներկայացնում են իբրեւ անձնական ձեռքբերում եւ բարձրացնում են սեփական ժողովրդականությունը, բնակչությունը աշխատում է շինարարությունում ու փող վաստակում, տեղական իշխանությունները եւս առանց փողի չեն մնում: Չինաստանը նույնպես շահում է, քանի որ շինարարական բոլոր կապալառուները չինական ընկերություններ են, որոնք աշխատանքով են ապահովում ճգնաժամի պայմաններում փողոցում հայտնված բազմահազար հայրենակիցներին: Այսօր չինական մասնագետների եւ բանվորների թիվն աֆրիկյան երկրներում մեկ միլիոնի է հասնում:

Բացի այդ, դոլարային վարկեր տրամադրելով՝ Չինաստանն ազատվում է էժանացող դոլարներից եւ ամերիկյան արժեթղթերից, փոխարենը ստանում օգտակար հանածոներ մշակելու հնարավորություն եւ անհրաժեշտ հունքով ապահովում իր աճող տնտեսությունը: Այսպես, հսկայական կառուցապատումներ իրականացնելով Անգոլայում (ճանապարհներ, երկաթուղի, կամուրջներ, դպրոցներ, հիվանդանոցներ եւ նույնիսկ Աֆրիկայի համար շռայլություն համարվող ինտերնետային մալուխ), Պեկինը ապահովեց պետական Sinopec ընկերության համար նավթային հանքավայրերից մեկի 50%-ը:

Բացի այդ, Պեկինը հնարավորություն է ստանում ներկայանալ իբրեւ մի տերություն, որն իրապես օգնում է բարելավել աֆրիկացիների կյանքը՝ ստանալով դրա համար աֆրիկյան պետությունների բարեհաճությունը, որը կարելի է նաեւ քաղաքական առումով, օրինակ՝ ՄԱԿ-ում քվեարկությունների համար:

2009թ. նոյեմբերին եգիպտական Շարմ էշ-Շեյխում տեղի ունեցավ Չինաստան–Աֆրիկյա չորրորդ գագաթաժողովը, որի ժամանակ Պեկինը

խոստացավ նույնիսկ ճգնաժամի պայմաններում «միայնակ չթողնել Աֆրիկային»: Հայտարարված ծրագրերը հսկայական էին՝ աֆրիկյան պետություններին տրամադրել երեք տարվա ընթացքում 10 միլիարդ դոլարի արտոնյալ վարկ, ստեղծել հիմնադրամ՝ աֆրիկյան փոքր եւ միջին ձեռնարկությունների վարկավորման համար 1 միլիարդ դոլար նախնական կապիտալով, աֆրիկյան աղքատ երկրների գրեթե բոլոր ապրանքներն ազատել Չինաստան ներկրման մաքսային վճարներից, ներել Սեւ մայրցամաքի ամենաաղքատ երկրների պարտքերը, աֆրիկյան 30 հիվանդանոցների տրամադրել բժշկական սարքավորումներ, կառուցել 50 դպրոց եւ սկսել վերականգնվող էլեկտրաէներգիայի արտադրության մոտ 100 նախագծեր (ՀԷԿ-եր եւ արեւային էներգիայով աշխատող կայաններ), ընդլայնել չինական բուհերում աֆրիկացի ուսանողների ուսուցումը (5,5 հազար ուսանողների եւ 2 հարյուր ասպիրանտների անվճար տեղերի տրամադրում), պատրաստել 1500 բժիշկներ եւ այլն:

Այս ամենն ուղեկցվում էր Արեւմուտքի անխնա քննադատությամբ, որին Չինաստանի վարչապետ Վեն Ցզյաբաոն պատասխանել է. «Մեզ վաղուց են մեղադրում, որ մենք եկել ենք Աֆրիկա միայն հանքային ռեսուրսների համար եւ նոր գաղութացում ենք իրականացնում: Այս մեղադրանքները բոլորովին անհիմն են: Մենք գործում ենք անշահախնդիր կերպով: Որպես Աֆրիկայի անկեղծ եւ հավատարիմ ընկեր՝ Չինաստանն զգում է այն բոլոր դժվարություններն ու մարտահրավերները, որոնց Աֆրիկան հանդիպում է իր ճանապարհին»:

Չինաստանի եւ աֆրիկյան պետությունների հարաբերություններն, իրոք, շատ բուռն զարգացում են արձանագրում: Վերջին հինգ տարիների ընթացքում միայն ուղղակի ներդրումների ծավալը 900 միլիոնից հասել է 4,4 միլիարդի: Առեւտուրը վերջին երեք տարվա ընթացքում 50 միլիարդից հասել է 108 միլիարդի: Աֆրիկյան պետություններն արտահանում են նավթ (հիմնականում Սուդանը, Հասարակածային Գվինեան, Նիգերիան եւ Անգոլան) եւ հանքանյութեր, ներկրում թեթեւ արդյունաբերության էժան ապրանքներ, որոնց զանգվածային արտադրության համար Աֆրիկայում հզորությունները չեն հերիքում: Այս իրավիճակը շատերը հակված են որակել իբրեւ գաղութացման նոր տարատեսակ եւ անարդար տնտեսական հարաբերություններ, սակայն աֆրիկյան պետություններին այս հարցերը չեն անհանգստացնում: Նրանց համար կարեւոր է, որ Չինաստանը կատարում է իր պարտավորվածությունները՝ առանց քաղաքական պայմաններ առաջ քաշելու կամ իրենց ներքին գործերին խառնվելու:

Լատինական Ամերիկա եւ Մերձավոր Արեւելք ներխուժումը

Չինաստանի վճռականության արտահայտումն է նաեւ այնպիսի տարածաշրջաններում ընդարձակվելու ձգտումը, ինչպիսիք են Լատինական Ամերիկան եւ Մերձավոր Արեւելքը:

Լատինական Ամերիկայի ծախսերի դյուրան առաջնորդները, հատկապես Վենեսուելայում, Էկվադորում եւ Կոլոմբիայում շատ ջերմ հարաբերությունների մեջ են Չինաստանի հետ: Պեկինը դիտարկվում է որպես հզոր դաշնակից հակամերիկյան քաղաքականության իրականացման գործում: Տարածաշրջանի մյուս պետությունները նույնպես դեմ չեն համագործակցելու ՉԺՀ-ի հետ՝ գրավիչ տնտեսական պայմաններ ապահովելու պարագայում: Այսպես, Կոստա Ռիկան, որը հրաժարվեց Թայվանի անկախության ճանաչումից, հսկայական օգնություն ստացավ Պեկինից:

2000թ. հայտարարված Պանամայի ջրանցքի կառավարման տեղերը շահել է Hutchison Whampoa ընկերությունը, որը Յունկոնգում բնակվող եւ ՉԺՀ իշխանությունների հետ սերտ կապեր պահպանող չինացի գործարար Լի Ցյաչենին է պատկանում, որը հսկայական հեղինակություն է վայելում Լատինական Ամերիկայի չինական համայնքներում: Ջրանցքը արդիականացման փուլում է, որը թույլ կտա նրանով անցնել սուպերտանկերների, ինչն անհրաժեշտ է, որպեսզի վենեսուելական նավթն ավելի դյուրին եւ ավելի մեծ ծավալներով հասնի Չինաստան: Երբ ջրանցքի արդիականացումն ավարտվի (2012թ.), այն հնարավորություն կտա դեպի Չինաստան ուղղել օրական մեկ միլիոն բարել նավթ:

Մերձավոր Արեւելքի նկատմամբ Չինաստանի հետաքրքրությունը կապված է նախեւառաջ մերձավորարեւելյան նավթի հետ: ՉԺՀ նավթի 80%-ը Մերձավոր Արեւելքի միջոցով է տեղափոխվում, 50%-ը արտահանվում է Պարսից ծոցից եւ Իրանից, իսկ դրա մատակարարման անխափանության ապահովումը մեծ նշանակություն ունի Պեկինի համար: Սա է պատճառը, որ Պեկինը մշտապես քաղաքական աջակցություն է ցուցաբերում նավթարդյունահանող երկրներին (մասնավորապես Իրանին, պարբերաբար արգելակելով միջուկային ծրագրի հետ կապված պատժամիջոցների սահմանումը եւ կիրառումը Թեհրանի նկատմամբ): Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում Չինաստանը նաեւ հետաքրքրություն է դրսևորում էժանացած ակտիվների եւ ենթակառուցվածքի շինարարության նկատմամբ: Այսպես, Սաուդյան Արաբիայի

Մեքքա եւ Մեդինա քաղաքները կապող երկաթգծի 1,8 միլիարդ դոլար արժողությամբ շինարարությունն իրականացնելու է չինական China Railway Engineering ընկերությունը:

Սակայն պետք է ասել, որ Չինաստանի քաղաքական ազդեցությունը Մերձավոր Արեւելքում դեռեւս թույլ է, եւ նա փորձում է լրացնել այս բացը: Այդ նպատակով, 2002թ. Չինաստանը հատուկ ներկայացուցիչ է նշանակել տարածաշրջանում, իսկ 2004թ. նախաձեռնել է Չինաստան – արաբական երկրներ համագործակցության ֆորումը: Քաղաքական կշռի բարձրացման ձգտման հետ եւ կապված մերձավորարեւելյան ճգնաժամի կարգավորման գործընթացում ներգրավվելու Չինաստանի հայտարարությունները, որոնք հնչեցվեցին 2009թ. ապրիլին չինական արտգործնախարարի տարածաշրջան կատարած այցի ժամանակ:

Նշենք, որ չինական հետաքրքրություններն այս տարածաշրջանի նկատմամբ ներառում են նաեւ ռազմական բաղադրիչը: Հիմնական հետաքրքրությունն առայժմ իսրայելական ռազմական տեխնոլոգիաներն են:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԲԱՆԱԿՈՒՄ Կարեն Վերանյան

Իսրայելն աշխարհի այն բացառիկ երկրներից է, որն աշխարհիկ պետություն լինելով՝ պետականաշինության եւ ազգակերտման գործընթացներում խիստ կարեւորություն է տալիս կրոնաբարոյական արժեքներին: Հնագույն ժամանակներից ի վեր, հատկապես պետականության բացակայության երկուհազարամյա ժամանակաշրջանում, հուդայական արժեքները առաջնակարգ նշանակություն են ունեցել հրեության անվտանգության ապահովման եւ ազգային ինքնության պահպանման հարցում: Հրեական կրոնաբարոյական նորմերում բազմիցս հիշատակվում է, որ «Էրեց-Իսրայել»-ի (Իսրայել պետության) ու նրա բնակիչների անվտանգության պաշտպանությունը յուրաքանչյուր հրեայի «սրբազան պարտականությունն» է:

Հրեական պետականաշինության պատմությունում հոգեւոր-բարոյական ուսմունքները նորովի վերիմաստավորվեցին սիոնիստական գաղափարախոսության առաջացման շրջանում: Առաջին սիոնիստ կրոնավոր առաջնորդները անգնահատելի ներդրում են ունեցել 20-րդ դարի սկզբներին հրեական պետականության համար մղված ազգային ազատագրական պայքարում: Հոգեւոր-բարոյական արժեքները մեծ տեղ են ունեցել մասնավորաբար Իսրայելի ազգային բանակի ստեղծման ու զարգացման գործում: Հրեության անվտանգության պաշտպանության համատեքստում այսօր շարունակում են արդիական մնալ հուդայականությունում ամրագրված պատերազմի վարման մեթոդներն ու էթիկայի սկզբունքները:

Հոգեւոր զինվորականի ինստիտուտը

Իսրայել պետության, նրա բնակիչների եւ առհասարակ համայն հրեության անվտանգության ապահովման հարցում հոգեւոր դասի զգալի ազդեցության մասին է խոսում Իսրայելի պաշտպանության բանակում Հոգեւոր զինվորականի ինստիտուտի գոյությունը: 1948թ. Իսրայել պետության եւ երկրի կանոնավոր ՋՈՒ ստեղծման հետ միաժամանակ Հոգեւոր զինվորականի ինստիտուտի ձեւավորման հանգամանքը եւս մեկ անգամ վկայում է Իսրայել պետության ղեկավար այրերի կողմից երկրի անվտանգության պաշտպանության հարցում հոգեւոր-բարոյական արժեքների խիստ կարեւորման մասին: Պետք է նկատել, որ Իսրայելական

բանակում Հոգեւոր զինվորականի ինստիտուտի ձեւավորումն առհասարակ պայմանավորված է հուդայական ավանդույթներով: Հրեության պատմության տարբեր դարաշրջաններում հրեա ժողովրդի զինվորական ու քաղաքական գործիչները, որպես կանոն, հանդես են եկել նաեւ որպես ազգի հոգեւոր առաջնորդներ:

Իսրայելում Հոգեւոր զինվորականի ինստիտուտը, որը գործում է երկրի պաշտպանության ուժերի Գլխավոր շտաբի ենթակայության ներքո եւ կրում վարչության կարգավիճակ, ի սկզբանէ ստեղծվել է զինծառայողների հոգեւոր-կրոնական կարիքների բավարարման եւ զինվորական առօրյայում կրոնական նորմերի ու սկզբունքների պահպանման գործընթացի վերահսկման նպատակներով: Իսկ ավելի լայն իմաստով, Իսրայելում Հոգեւոր զինվորականի ինստիտուտի գործունեությունը գերազանցապես ընթանում է հրեա զինվորականների հոգեւոր-բարոյական դաստիարակման, մարտական ոգու բարձրացման ուղղությամբ:

Հոգեւոր զինվորականությունը անմիջական մասնակցություն է ունեցել Իսրայելի պաշտպանության բանակի կողմից ներկայացված բազմաթիվ փաստաթղթերի ու հրամանագրերի նախապատրաստման ու մշակման աշխատանքներին, որոնք անմիջականորեն առնչվում են զինվորականության հոգեւոր անվտանգության խնդիրներին: Մասնավորապես, Հոգեւոր զինվորականությունը, երկրի ՁՈւ Գլխավոր շտաբի Դաստիարակության հարցերով վարչության հետ համատեղ, մշակել է 1992թ. Իսրայելի պաշտպանության բանակի կողմից պատրաստված «Հրեա զինվորականի վարքականոնը», որը կրում է հուդայական կրոնաբարոյական նորմերի ազդեցությունը:

Իսրայելի պաշտպանության բանակի Հոգեւոր զինվորականի ինստիտուտը ակտիվ գործունեություն է ծավալում նաեւ երկրի ներքին ու արտաքին տեղեկատվական-քարոզչական բնագավառում, հրատարակում կրոնաբարոյական եւ առհասարակ հոգեւոր անվտանգությանը վերաբերող գիտակրթական հանդեսներ ու հետազոտություններ, լույս ընծայում հոգեւոր գրականություն ու աղոթագրքեր, որոնք նախատեսված են ինչպես երկրի ՁՈւ զինվորականների, այնպես էլ քաղաքացիական բնակչության հոգեւոր-բարոյական դաստիարակության համար:

Ի դեպ, Հոգեւոր զինվորականի ինստիտուտը գործում է Իսրայելի քաղաքացիական Գլխավոր հոգեւորականությունից անկախ եւ անմիջականորեն ենթարկվում է պաշտպանության բանակի Գլխավոր շտաբի պետին, իսկ Գլխավոր հոգեւոր զինվորականը մշանակվում եւ պաշտոնից ազատվում է Գլխավոր շտաբի պետի հրամանով:

Իսրայելում հոգեւոր զինվորականի պատրաստման գործընթացն

իրականացվում է հիմնականում երկրի պաշտպանության բանակում գործող զինվորական ուսումնական հաստատություններում, որտեղ հոգեւոր-կրոնական դասընթացները համադրվում են մարտական պատրաստվածության տարբեր մասնագիտացումներով: Հոգեւոր զինվորական կադրերը վերապատրաստվում են նաեւ երկրի հոգեւոր քաղաքացիական ուսումնական հաստատություններում:

Հոգեւոր զինվորականությունը մարտական գործողություններում

Իսրայելի պաշտպանության բանակում Հոգեւոր զինվորականության ինստիտուտի հիմնադրման գործընթացը մեծապէս առնչվում է սիոնիստական շարժման գաղափարախոսության եւ մասնավորապէս նրա հոգեւորական դասի հետ, որի ներկայացուցիչներից շատերն անդամագրվեցին նորակազմ ինստիտուտի շարքերում: Դա է, թերեւս, այն հիմնական պատճառներից մեկը, որ Հոգեւոր զինվորականությունը հանդիսանում է Իսրայելի պաշտպանության բանակի առավել պահպանողական ուժերից մեկը եւ առանձնանում է արաբա-իսրայելյան հակամարտության հիմնահարցերում իր համեմատաբար անզիջում մոտեցումներով ու դիրքորոշմամբ:

1948թ. Իսրայելի Ջինված ուժերի Հոգեւոր զինվորականության ինստիտուտի առաջին ղեկավար նշանակվեց գեներալ-մայոր Շլոմո Գորենը: Վերջինս 18 տարեկանում դառնալով հոգեւորական՝ անդամագրվեց Իսրայելի Ջինված ուժերի հիմքը հանդիսացող «Հագանա» խմբավորմանը եւ 1936–1939թթ. մասնակցեց Պաղեստինի հրեական բնակավայրերի պաշտպանության գործողություններին: Զգալի է Շլոմո Գորենի՝ որպէս հոգեւորականի եւ մարտիկի, ավանդը 1948թ. անկախության համար մղված ռազմական գործողություններին, 1956թ. Սինայի կամպանիային: Նա անմիջական մասնակցություն է ցուցաբերել նաեւ 1967թ. վեցօրյա պատերազմում. Երուսաղեմի Տաճարի լեռան համար մղվող մարտի ժամանակ Իսրայելի պաշտպանության բանակի Գլխավոր հոգեւոր զինվորականը բարձրացավ լեռան վրա՝ փողհարելով եւ ձեռքին խորհրդանշաբար պահելով Թորայի թերթիկը, ինչը ապշեցուցիչ ազդեցություն թողեց մարտի մասնակիցների վրա (փողհարումը հին հրեական ավանդույթում կարելոր խորհրդանշական իմաստ ունի եւ կոչված է համախմբելու հրեա ժողովրդին օրհասական իրադրությունում կամ պատերազմում): Իսկ Խելրոն քաղաքի համար մղվող մարտական գործողությունների ընթացքում, վերջնական գրոհից առաջ, նա ցուցադրաբար մոտեցավ քաղաքի «Նախահայրերի քարանձավին» (Աբրահամի

եւ Սառայի, Իսահակի եւ Ռեբեկայի գերեզմանները), հրազենային կրակահերթով բացեց փակված դուռը, փողհարեց եւ ներս մտավ քարանձավ՝ Թորայի թերթիկը ձեռքին եւ աղոթք կարդալով: Պետք է նկատել, որ նրա մուտքը «Նախահայրերի քարանձավ» խիստ խորհրդանշական իմաստ ունի հրեության պատմության մեջ. խնդիրն այն է, որ Շլոմո Գորենն առաջին հրեան էր, որը մուտք գործեց «Նախահայրերի քարանձավ» վերջին 700 տարիների ընթացքում՝ այն ժամանակվանից սկսած, երբ 13-րդ դարի սկզբներին մանլուք առաջնորդ Բեյբարսը հրաման արձակեց, որով արգելվում էր հրեաներին ու քրիստոնյաներին մուտք գործել քարանձավ: Շլոմո Գորենի այս գործողությունը բարձրացրեց իսրայելական գործի մարտական ոգին եւ զգալի ազդեցություն ունեցավ պատերազմում իսրայելական կողմի հաղթանակի գործում: Փաղհարող Շլոմո Գորենի լուսանկարը դարձավ 1967թ. վեցօրյա պատերազմի հաղթանակի կարեւորագույն խորհրդանիշը:

Հոգեւոր զինվորական այրերը, ռազմական գործողություններում հրեա զինվորների հետ կողք կողքի ուղղակի մասնակցություն ունենալուց զատ, զուգահեռաբար էական աշխատանքներ են տարել տեղեկատվական պատերազմներում, որոնք առանցքային մշակակություն են ունեցել մարտի դաշտում հրեա զինվորականության մարտական ոգու բարձրացման եւ հակառակորդի բարոյալքման առումով: Նման քարոզչության օրինակներից է 2009թ. գարնանը Գազայի հատվածում իսրայելապաղեստինյան հերթական ռազմական բախումների ընթացքում Իսրայելի հոգեւոր զինվորականության ձեռնարկած տեղեկատվական գործողությունը: Մասնավորաբար, մարտական գործողությունների նախաշեմին հոգեւոր զինվորականությունը տարածեց մի շարք թերթիկներ ու հոդվածներ, որոնցում կոչ էր արվում պայքարել հանուն Սուրբ հողերի պաշտպանության. խոսվում էր, որ «հրեաներին Իսրայելի հողերը տրվել են Աստծո կողմից՝ որպես պարգև, եւ իրենց պարտականությունն է պայքարել հանուն դրանց պաշտպանության»: Ուշագրավ էր նաեւ 2008թ. դեկտեմբերի վերջին Իսրայելի կողմից ձեռնարկված «Ձուլածո արճիճ» ռազմական գործողության ժամանակ Գլխավոր հոգեւոր զինվորական Ավի Ռոզնիկ Ռոնցկիի կողմից զինվորների շրջանում թերթիկների տարածումը՝ «Մասնակցի՛ր իմ պայքարին» խորագրով:

Հոգեւոր զինվորականության սպայակազմի ներկայացուցիչների մեծ մասը, որոնք պաշտպանության բանակի զինվորական ուսումնական հաստատությունների շրջանավարտներ են, իրենց զինժառայությունն անց են կացնում մարտական ստորաբաժանումներում եւ ակտիվ մասնակցություն ունենում տարբեր մարտական գործողություններին:

Պատերազմական գործողությունների ընթացքում Իսրայելի պաշտպանության բանակի դիվիզիաներում հավաքագրվում են պահեստայիններ ու նրանցից կազմվում հոգեւոր զինվորականների ջոկատներ, որոնք պատասխանատու են այդ թվում մարտի դաշտում զոհված հրեա զինվորների ու սպաների հուղարկավորության, ինչպես նաեւ անհայտ կորած զինվորների հայտնաբերման համար: Նկատենք, որ հրեա զինծառայողը պաշտոնապես զոհված է համարվում, որպես կանոն, Իսրայելի պաշտպանության բանակի Գլխավոր զինվորական հոգեւորականի կողմից այդ փաստը հաստատելուց հետո միայն:

Իսրայելի պաշտպանության բանակի հոգեւոր զինվորական ղեկավարները բավական կոշտ դիրքորոշում ունեն նաեւ հրեության շրջանում տարածված «յուրաքանչյուր հրեա ռազմագերու՝ ամեն գնով ազատագրելու» գաղափարի հետ կապված: Նրանց կարծիքով՝ նման սկզբունքով առաջնորդվելը նպաստում է հակառակորդի կողմից հրեա զինվորականների առեւանգման դեպքերի հաճախակիացմանը: Մասնավորապես, 1985թ. «Ջիբրիլի երկրորդ գործարքի» (Ահմադ Ջիբրիլ՝ «Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատ» ահաբեկչական խմբավորման առաջնորդ) ժամանակ, որով երեք հրեա ռազմագերիների ազատագրման դիմաց ազատ արձակվեցին 1150 դատապարտված գրոհայիններ, Իսրայելի բանակի արդեն նախկին Գլխավոր հոգեւորական Շլոմո Գորենը հայտարարեց, որ այն հակասում է հրեական կրոնաբարոյական ավանդույթներին: Ներկայում Զոգեւոր զինվորական ղեկավարությունը որոշակի վերապահումներով է մոտենում նաեւ իսրայելցի մեկ այլ զինվորականի՝ Գիլադ Շալիթի ազատ արձակմանը, որի դիմաց իսրայելական կողմին զգալի պահանջներ են ներկայացվում:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|---|----|
| Ֆեոդոր Շելով-Կովեդյան ԳՆՈՐԱԼ ԳԳՆԱԺԱՄԻ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ | 1 |
| Ռուբեն Մելքոնյան ՊՈԼՍՈ ՅԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ԵՎ ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՅԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ | 8 |
| Արեստակես Սիմավորյան ԹՈՒՐՔԻԱՅԻ ՅԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ | 13 |
| Հայկ Գաբրիելյան ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ | 17 |
| Արաքս Փաշայան ԹՈՒՐՔԻԱ–ԻՐԱՔ ՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ | 23 |
| Սեւակ Սարուխանյան ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ | 29 |
| Բենիամին Պողոսյան ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԵՐ | 33 |
| Գագիկ Տերտերյան ԱՖՂԱՆՍՏԱՆ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՅՍՏԱԿԵՑՈՒՄ | 41 |
| Սուրեն Մանուկյան ՉԻՆԱՍՏԱՆԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԳԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ... | 46 |
| Կարեն Վերանյան ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԲԱՆԱԿՈՒՄ | 52 |

*Շապիկին պատկերված է Արարատը
Գեղամա լեռնաշղթայից*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: *Հեռ. 58 04 91, 58 04 83:*
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: